



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# Ս. ՍԱՅԱԿ ՊԱՐԹԵԻ

(Արտատպած «Լուսալ» հանդիսից)



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի

1902

1008  
36775

Дозволено цензурою. Тбились, 4-го Марта 1903 г.

## Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ

### 1. Հնարութիւն եւ առաջին կեանք:

Սալուրակէսի մահուանէ ետքը 386 և 387 տարուայ մը չափ կաթողիկոսական աթոռը դատարկ մնաց: Երկիրը երկու քաղաքական պետ ունէր, այլ եկեղեցւոյն ալ երկու պետ տալ հնար չէր, և երկու կողմերուն համամութիւնը պէտք էր որպէս զի եկեղեցին միակ հայրապետ մը ունենար՝ բոլոր ազգէն հաւասարապէս հոգևոր գլուխ ճանչցուած: Յանկարծական պատահար մը լուծումը փութացուց: Արշակ, յունական բաժնին թագաւորը, մաշարայական ախտիւ մեռաւ, բաժանումէ երկուքուկէս տարի յետոյ (Մոր. 114) 386ին վերջերը, և Յոյները իրեն յաջորդ թագաւոր մը չգրին, այլ կոմս մը անուանեցին իբր կուսակալ, և նախարարական գունդերուն ալ հրամանատար կամ նախարարապետ նշանակեցին Գագուան Կամսարականը: Խոսրով մնաց միայնակ ազգային վեհապետ և կրցաւ ազատօրէն հայրապետական ընտրութիւնը լրացնել, և բովանդակ ազգին համակրութեան առարկայ անձ մը բարձրացնել աթոռին վրայ: Սահակ Պարթև, Ներսէս Պարթևի որդի, Աթանազիւնէի թոռ, Յուսիկի թոռնորդի, Արթանէսի թոռնեայ, և Լուսաւորջի ձագթոռ, որ է հինգերորդ ծնունդ, հայրապետ եղաւ Խոսրովու Յորջ տարին (Մոր. 188), այսինքն է 387-ին: Խոսրովին համար մեծ գովեստ և արժանիք է այսպիսի արժանաւոր ընտրութեան պատճառ եղած ըլլալ:

Սահակի ծնունդը, ինչպէս յիշեցինք, եղած էր ի Կեսարիա, երբ Ներսէս և Սանդուխտ մանկամարդ ամուսիններ, ի միասին ուսում առնելու համար այնտեղ կը գտնուէին: Մեք 350-ին Ներսէսը արդէն Կոստան-

դնուպոլիս եկած կը գտնեմք, միւս կողմանէ նաւասար-  
դի 30-ը նշանակուած է իբրև Սահակայ ծննդեան օր  
(Խոր. 188, Փրպ. 114, Կոր. 25, Սոփ. 28), արդ թէ  
349-ի և թէ 348-ի նաւասարդ 30-ը կը հանդիպի սեպ-  
տեմբեր 29-ին, և մեզի յարմարագոյն կերևի 348 սեպ-  
տեմբեր 29 թուականը ընդունել հաստատապէս իբրև  
Սահակայ ծննդեան օրը: Երբ Վարդան Մամիկոնեան  
վաղամեռիկ դստեր մարմինը Կեսարիայէ Թիլ փոխադ-  
րեց, հարկաւ որք մանկիկն ալ բերաւ ի միասին մայ-  
րենի պապոնց տունը. և Մամիկոնեանց մօտ սնաւ ու  
աճեցաւ Սահակ ու անցուց իւր կենաց առաջին տարի-  
ները:

Բնական էր որ Ներսէս հայրապետ մեծ հոգ տա-  
նէր իր միածնին կրթութեան, և Սահակ երկար տարի-  
ներ դեգերեցաւ Կեսարիա և Բիւզանդիոն, և կատա-  
րեալ հելլենական ուսում ստացաւ. «Յոյժ առլցեալ  
անցուցանէր վարժիւք զբազում գիտնովք Յունաց, ե-  
ղեալ կատարելապէս հմուտ երգողական տառիցն և  
հռետորական յորդասաց յայտնաբանութեան, ևս առա-  
ւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցա-  
նիւր» (Փրպ. 47): Հելլենականին հետ չէր պակսէր Սա-  
հակայ ասորական ուսումն ալ որ աւելի գործածական  
էր արեւելեան և հարաւային նահանգներու մէջ (Խոր.  
140), ինչպէս և պարսկական լեզուն որ կարևոր էր  
քաղաքական յարաբերութեանց համար: Իսկ հայերէն  
գպրութեանց ոչ թէ լոկ մշակող մը եղաւ, այլ իսկա-  
պէս գտիչ և հիմնադիր. և եթէ գրոյն հեղինակը Մես-  
րոպ եղաւ, գրականութեան հեղինակը Սահակ եղած է:

Սահակայ ամուսնութիւնը պէտք չէ ուշացնել:  
Վարդան իւր թուր 417 դեսպանութեամբ Կոստանդնու-  
պոլիս կերթայ և ստրատելատի պաշտօն կընդունի (Խոր.  
154): Այդ Վարդանը գոնէ 28 տարեկան ենթադրելով  
և մօրն ալ ծննդեան ատեն իբր 18 տարի տալով, Սա-  
հակայ ամուսնութիւնը պէտք կլլայ զնել 369-ին, 21  
կամ 22 տարեկան եղած ատեն, որ ուշ չէ, նկատելով  
Ներսէսի ալ սերունդը պահելու համար ունեցած փոյթը:  
Իսկ Սահակ ինչպէս ամուսնութենէ առաջ, նոյնպէս

ամուսնութենէ ետքն ալ կարող էր ուսում շարունակե-  
լու համար արտասահման երթալ:

Սահակի ամուսնոյն ոչ ցեղը գիտեմք և ոչ անունը.  
որոնք մամին անունը թուան վրայ կրկնուած են թա-  
գրելով Շուշան կոչեցին Սահակայ ամուսինը, այլ պարզ  
ենթադրութիւն է: Սահակ միակ աղջիկ զաւակ մը ու-  
նեցած է Անոյշ կամ Սահականոյշ անուն. և այդ մեծ  
մտահոգութիւն պատճառած է իրեն, զի Լուսաւորչայ  
սերունդը պահելը՝ մեծ մտածմունք մը եղած էր թէ  
ազգին և թէ նոյն տոհմին, իբր այն թէ Լուսաւորչի  
սերունդին յարատեւութիւնն Լուսաւորչի եկեղեցւոյն  
պահպանութեան գրաւականը լինէր (Փրպ. 88):

Այդ մտահոգութիւնն էր որ առիթ տուաւ Սահա-  
կայ նշանաւոր տեսիլքին, զոր ինքն գաղտնի պահեց  
մինչև իւր կեանքին վերջերը, և այն ատեն ընդարձա-  
կօրէն պատմեց նախարարներուն (Փրպ. 87—113): Տե-  
սիլքը եղած է «ի մեծ եկեղեցւոյ Վաղարշապատու» (Փրպ.  
90), որ է Ս. Էջմիածնի կաթողիկէն, աւագ ուրբա-  
թու հսկման գիշերը: Մեծի հինգշաբաթու երեկոյեան  
պատարագին հաղորդուած էր և բերանալուծի աղու-  
հաց ճաշկած, առաջին զուբղաներն ալ ըսուած էին,  
և ըստ սովորութեան ընթերցուած կը լինէր մինչև  
գիշերայինի ատենը գայ: Ընթերցողը, կրսէ Սահակ, կա-  
մաւ կերկարէր ընթերցուածը որպէս զի պաշտօնեայք  
հանգստանալու և ժողովուրդը հաւաքուելու ատեն ու-  
նենան. ինքն ալ սեղանի մօտ նստած էր (Փրպ. 89):  
Այդ պարագայք կը ցուցնեն թէ Սահակ պարզ պաշտօ-  
նեայ, կամ ըստ յայտնաւորաց միայն սարկաւագ էր  
այս տեսիլքին միջոցին, երբ ուսում աւարտելէ չետոյ  
հայրենիք դարձած և եկեղեցւոյ ծառայութեան մտած  
էր, միանգամայն երիտասարդական բորբոքմամբ հետա-  
մուտ էր արու զաւակի տէր լինել: Ամուսինն ալ կեն-  
դանի էր հարկաւ, զի այլազգ փափաքելու ալ տեղի  
չէր մնար, տարիքն ալ երեսունը նոր անցած են թա-  
գրելով, հնար է 380 ապրիլ 9 աւագ հինգշաբթիի վը-  
րայ եկող գիշերը՝ տեսիլքին հաւանական թուականը  
ընդունել:

Տեսիլքին պարունակութիւնը հետևեալն է: Մեծ.

խորան մը ճերմակ կտաւով ծածկուած և վրան լուսաւոր խաչ, խորանին մէկ փեղկը կը բացուի և կը տեսնուի սեղան մը վրան հաց ու ողկոյզ, մօտը ձիթենի մը, երեք մեծ և երեք փոքր ոստերով և տարբեր պրտադաբերութեամբ: Սեղանին միւս կողմը աթոռ մը թուխ կտաւով պատած, և աթոռին վրայ սկտեղի մը մէջ ծալեալ նափորտ մը և ոսկի գունդ մը և մագաղաթ մը, վրան քանի մը տող ոսկեգիր, քանի մը տող ջնջեալ, տողակէս դարձեալ ոսկեգիր, և ապա կարմրագիր: Սկտեղին շուրջը մանջ ու աղչիկ տղաքներ: Նարժ մը կելլէ, աթոռ կը շարժուի և տղայք կերիտասարգանան և կը թևաւորուին և գետնէն սեղան և սեղանէ երկինք կը բարձրանան:

Ոմանք ուզեցին տեսիլքը իբր անհարագատ գրութիւն նկատել և իբր եղելութիւններէ յետոյ պատրաստուած գուշակութիւն կարծել, սակայն և ոչ իսկ եղելութեանց հետ ճիշտ համաձայնութիւն մը հնար է կազմել: Մեկնութեան մէջ ըսուած է թէ 350 տարիէ աւնապատի պղծութիւնը պիտի երևի. Սրշակունեաց թագաւորութիւն և Պահլաւունեաց քահանայապետութիւն պիտի նորոգուի, Լուսաւորչայ նորոգեալ ցեղէ կաթողիկոս մը պիտի մարտիրոսանայ, և այլն, որք ընաւ ե. ղելութեանց մէջ չեն ճշմարտիր, և եղելութեանց վրայ յենուած լինելու նշան չունին: Այս կողմանէ Սահակայ տեսիլքը շատ տարբեր է Ներսէսի տեսիլք կոչուած գրուածքէն:

Սահակայ առաջին կեանքը կը նկարագրուի իբր ճգնառական, բայց ոչ անապատական, այլ «յաշխարհի գոլով» (Սահ. 5): Ունեցաւ ևս վաթսուն աշակերտներ որք իրեն հետ աղօթից և ուսմանց կը պարապէին և աշխարհի պէտքերն ալ կը հոգային (Խոր. 122): Ասոնք են որք յետ ժամանակաց ասպարէզի վրայ տեսնուեցան գիրի գիւտին ժամանակ, և անկէ առաջ ալ եկեղեցիներու մէջ թարգմանչութեան կարևոր պաշտօնը կը վարէին:

Ոմանք կարծեցին թէ Սահակ ամուսնոյն մեռնելէն ետքը (Չամչ. Ս. 484), և ուրիշներ ենթադրեցին թէ ամուսնէն բաժնուելով (Վարք. Բ. 136), եկեղեցա-

կանութեան նուիրուեցաւ, թէպէտ նախնական աղբերք ոչ մին կը լիշեն և ոչ միւսը: Ներսէս և Յուսիկ ալ կանուխ այրիացան, զուցէ նոյնպէս ղիպեցաւ և Սահակայ, այլ միշտ սարկաւագութենէ և 380-ի տեսիլքէն ետքը. և այն ատեն կրցաւ աշխարհէ ձեռք քաշել և կրօնաւորական հասարակութեան մը գլուխ կանգնել (Խոր. 122): Քահանայութիւնն ալ ստուգիւ Ասպուրակէսէ ստացաւ, թերևս եպիսկոպոսութիւնն ալ կաթողիկոսութենէ առաջ ստացած էր:

Սահակ ըստ ամենայնի պատրաստ էր աթոռոյն յարգութեան Ասպուրակէսի մահուան պահուն, 386-ին, և միայն քաղաքային պահանջմանց բերմամբ 387-ին աթոռ բարձրացաւ: Յայտնի է թէ ձեռնադրութեան համար Կեսարիա չգնաց, արդէն նախորդ Մանազկերտացիք դադրեցուցեր էին այդ սովորութիւնը, և եթէ Սահակ արգէն եպիսկոպոս չէր, հարկաւ ազգային եպիսկոպոսներէ առաւ ձեռնադրութիւնը: Սահակ իբր 40 տարեկան էր հայրապետ եղած ատեն:

## 2. Առաջին գործունէութիւն.

Խոսրով Սահակայ ընտրութեամբ քաղաքական նըպատակի ալ ծառայած կերևի. ոչ միայն Սահակայ արժանեօք և Լուսաւորչեան սերունդին համակրութեամբ, այլ և յունական շահուց բարեկամ անձի մը ներկայութեամբ լինքն գրաւելով յունական բաժնին ազգայնոց և նոյն իսկ կայսեր համակրութիւնը: Թէոդոս մեծ հաճեցաւ 388-ին որպէս ղի Խոսրով յունական բաժնին ալ կառավարէ յունական օրէնքով և յատուկ հարկով, ղի միւս կողմանէ կը վախնար, չըլլալ թէ իւր բաժնին հայերը ուզեն ուղղակի Խոսրովի ձեռքին տակ մտնել և Սահակայ խնամքը վայելել:

Խոսրով կրնար ենթադրել թէ Պարսից հաճոյ պիտի լինի յունական բաժնին անուղղակի կերպով իրենց գերիշխանութեան ներքեւ անցնելը. ընդ հակառակն Եսպուրհ Գ. կարծեց թէ Խոսրով կուզէ Պարսից բաժնը Յունաց մօտեցնել (Խոր. 122), և առ այս նպատեց հայ նախարարներէն ոմանց քսութիւնը (Փրպ. 35):

Խոսրով հրաւիրուեցաւ ի Տիգրոն, և նա՛ կամ այն է որ միամտօրէն գնաց (Փրպ. 36), կամ թէ ընդդիմանալուն վրայ բռնի տարուեցաւ (Խոր. 124), ստույգ է թէ թագաւորութենէ և ազատութենէ զրկուեցաւ և բանտարկուեցաւ թագաւորելուն 5-րդ տարին (Խոր. 126), այսինքն է ՅՉ-ին: Նոյն վճիռը պահ մը Սահակն ալ «վերջովեաց ի պատուոյն» (Խոր. 124), այլ հետեանք չունեցաւ և պաշտօնին վրայ մնաց, և երևի թէ սպառնալիքով մը ամեն բան վերջացաւ:

Խոսրովի գահը դատարկ չմնաց: Պարսիկներ զգացած էին թէ Հայք առանց Արշակունի պետի մնալ չեն ուզեր, ուստի Վաւմ-Կրման հօրը յաջորդելուն պէս թագաւորեցուց Խոսրովու եղբայր Վաղարշը, և անոր պահալակ անունն ալ փոխելով (<sup>1</sup>րժ. 69), իւր և իւր հօր անուններուն բարդութեամբ, Վաւմ-Շապուհ անուանեց: Սահակայ կաթողիկոսութիւնն ալ արքունական հաստատութիւն ստացաւ և արգիւնաւոր գործունէութեան դուռ բացաւ: Վաւմշապուհ և Սահակ խաշաղ և օգտաւէտ իշխանութիւն վարեցին քառսրդ դար մը, և քաղաքական տկարութեան միջոցին զբական ոսկեղարը հիմնեցին:

Սահակայ հայրապետական բարեկարգութիւնք սկըսան անդստին այս միջոցին սկիզբէն, բայց որովհետեւ ամեն իշխատակք որ կան գիրի գիւտէն լետոյ աւանդուած են մեզ, հետեաբար այստեղ առաջ բերելու մանրամասնութիւններ կը պակսին: Բաղաքական գործառնութեանց մէջ Սահակայ մասնակցութիւնը աներկբայ է բոլոր եղելութեանց ընթացքէն: Արչափ և յունասէր ուղղութիւնն ալ յայտնի է, և Խոսրովու անկմամբ հաստատուած, սակայն պէտք է ըսել թէ Սահակ անկեղծաւոր և ուղղամիտ ընթացքով գիտաց իրաց պահանջքը յարգել, ուղիղ քաղաքականութեամբ գործել, և նոյն իսկ պարսիկ արքունեաց առջև յարգ ու վստահութիւն վայելել: Ասոր առաջին նշանը եղաւ իւր փեսային՝ Համագասպ Մամիկոնեանին սպարապետութիւն ընդունելը: Սպարապետ Սահակ Բագրատունի մեռած էր Խոսրովի վերջին տարին, յաջորդը չընտրուած ինքն գահագուրկ էր եղած, իսկ Վաւմշապուհ իւրովի գոր-

ծելէ կը քաշուէր: Սպարապետութիւնը Մամիկոնէից իրաւունքն էր, և Սահակայ աղջիկը, որ հաւանաբար Յ86-ին Համագասպայ հետ ամուսնացած էր, սաստիկ կը թախանձէր: Սահակ սպարաւորուեցաւ անձամբ Տիգրոն երթալ:

Սահականոյշ դուստր Սահակայ, որդւոյ Սանդխտոյ, դստեր Վարդանայ, թոռնեայ է Վաչէեան Արտաւագդայ, իսկ Համագասպ որդի Մանուէլի, որդւոյ Վասակայ, թոռնորդի է նոյն Արտաւագդայ, որով Սահականոյշի և Համագասպի ազգակցութիւնը կը հասնի եօթներորդ աստիճանի, և բոլորովին աւելորդ կը դառնայ ճիւղահամարի ճշդութեան մասին ոմանց յարուցած խղճահար կասկածը (Յուշիկք. Ա. 319): Թող որ չորրորդ դարուն կանոնները վերջին դարերու կանոններէն նուազ խիստ էին այս կէտին մէջ:

Սահակայ Տիգրոն երթալուն առաջին շարժառիթն էր Մամիկոնեանց իրաւունքը և իւր աղջկան թախանձանքը և փեսային փառաւորութիւնը, աւելցնենք նաև սպարապետութեան փափուկ պաշտօնին արժանաւոր ձեռք մը յանձնուելը (Խոր. 128): Բայց Սահակ ուրիշ գործեր ալ կատարեց: Նախ կարգադրեց և պարգեց Վաւմայ և Վաւմշապուհոյ յարաբերութիւնները. Պարսից սրտին ներշնչեց Հայոց վրայ վստահութիւն. ցուցուց Յունաց բաժնին հետ լաւ յարաբերութիւն պահելուն մէջ Պարսից արքունեաց օգուտը. կասկածաւոր կամ մեղապարտ կարծուած նախարարներուն գործերէն շատերն ալ կարգադրեց. նախարարական գահնամակը նորոգել տուաւ. յօգուտ Մամիկոնեանց նպաստաւոր փոփոխութիւն ընդունեցաւ. հաւանաբար Խոսրովու բանտարկութեան ալ թողութեան շնորհ ստացաւ. և փառաւոր յաջողութեամբ իւր աթոռը դարձաւ:

Այդ գործողութեան թուական կրնամք նշանակել Վաւմշապուհոյ երկրորդ տարին, որ է Յ90: Ասկէ ետքն է որ Վաւմշապուհ համարձակ յարաբերութեանց կսկսի յունական բաժնին հետ և յատուկ հարկատուութեամբ առ կայսրն յանձնառու կը լինի նոյն բաժնին ալ կառավարել (Խոր. 132), որ Խոսրովու վրայ յանցանք նկատուած էր: Սահակ ալ նոյն կարգադրութեան շնորհիւ

համարձակութիւն կունենայ հայրապետական իշխանութիւնը տարածել և զօրացնել յունական բաժնին մէջ:

### 3. Գիրի գիւտը:

Սոյն 390 թուականին մինչև 404, որ է գիրի գիւտին տարին, 15 տարւոյ միջոցին մէջ, բնաւ պատմութեան մէջ աւանդուած եղելութիւն չեմք գտներ, բայց եթէ ընդհանուր ճիշդ մը եկեղեցական բարեկարգութեան և կրօնական ուսմանց և հաւատայեաց հրմտութեան տարածուելուն համար, որ տակաւ աճելով առիթ կընծայէ հայ գրութեան և գրականութեան հետամուտ լինելու, և որ վերջապէս չնաշխարհիկ յաջողութեամբ կը պսակուի: Այդ յաջողութիւնը բովանդակ իսկ ազգային պատմութեան բարձրագոյն կէտն է, այլ մէք զանց կընեմք անոր մանրամասնութեանց մտնել, զի նիւթը մատենագրական պատմութեան յատուկ է, և մեզ բաւական է եկեղեցական պատմութեան պահանջածին շափ ծաղկաբաղ ընել:

Գիրի գիւտին հովանաւորն եղաւ Առամշապուհ, պաշտպանը եղաւ Սահակ, այլ ուղղակի հեղինակն եղաւ Մեսրոպ, որ նոր ասպարէզ կուգայ պատմութեանս մէջ: Մաշթոց Վարդանեան Հացեկացի, Տարոնոյ գաւառէն, Ներսէսի հիմնած վարժարանաց աշակերտ, սոյն հայրապետին մահուան միջոցին մօտը կը գտնուի ի 373, և եթէ զոնէ 2 տարեկան ուղեմք ենթադրել այն պահուն, 353-ին ատենները ծնած, և Սահակէ 4 կամ 5 տարեկան կրտսեր եղած կը լինի: Ներսէսի մահուանէ ետքը արքունական ծառայութեան կը մտնէ (Խոր. 114), և Խորհրդու ժամանակ «կարգեալ լիւրում մատենագիր արքունի դպրոց» (Փրպ. 37), կը մնայ այդ ծառայութեան մէջ նաև Առամշապուհ իշխանութեան ատեն (Խոր. 134): Մաշթոց, որ և Մեսրոպ, արքունեաց մէջ չգտներ իւր սրտին յազուրդը, և Ներսէսի նախկին աշակերտը Ներսէսի որդւոյն մօտ կը դառնայ իւր կեանքն ու աշխատութիւնը Աստուծոյ և եկեղեցւոյն նուիրելու նպատակով: Կորիւն մահուանէն 45 տարի առաջ եղած կըսէ այդ փոփոխութիւնը (Կոր. 29), որով կիցնայ այն 394 թուին, և

ըստ այսմ Մեսրոպ 5 տարի Խորհրդին ծառայելէն ետքը 5 տարի ալ Առամշապուհին կը ծառայէ. որ յետոյ նոյն յաջողակութեամբ մէկը չգտներ Մեսրոպին ըրածը կատարելու համար (Խոր. 134):

Մեսրոպայ կրօնաւորութիւնը որչափ և միայնակեցութեան և ճգնութեանց պարագաներով պատմուած, պէտք չէ երբէք որ պարզ աղօթական կեանք մը կարծուի: Նա իւր նոր կեանքին սկիզբէն քարոզելու ձեռնարկեց և իրեն ասպարէզ ընտրեց Գողթն գաւառը և Սիւնեաց նահանգը, ուր տակաւին հեթանոսութեան հետքեր ալ կը մնային: Շաբիթ իշխան Գողթան և Վաղինակ նախարար Սիւնեաց օգնեցին և օգտուեցան Մեսրոպայ առաքելական ջանքերէն: Մեսրոպայ մեծ գէնքը աւետարանն էր, բայց աւետարանը ծանօթացնելու համար բերանացի թարգմանութենէ շատ միջոց չկար, քանի որ ժողովուրդը օտար լեզու չէր հասկանար, և քնիկ լեզուով ոչ գիր կայր և ոչ գիրք և ոչ սուրբ գիրք. գծուարին կացութեան դարմանը կը տանջէ մեծ դպրապետին միտքը որ ժողովրդեան ծառայելու սկսելէն ետքը կզգայ ժողովրդական լեզուն զրի առնելու հարկը, ինչպէս կընէր երբեմն պաշտօնական շրջանակին մէջ: Կը դիմէ Սահակայ, որ հայրն էր կարօտ ժողովրդեան, և որ առաջին գիրքն ունէր երկրին գիտնականներուն մէջ: Ո՞ր գիտէ քանի քանի անգամներ խորհրդակցեցան երկու երանելիներ անգիր ազգին խեղճութեան վրայ:

Խորհուրդներէ խօսակցութեան և խօսքերէ գործակցութեան անցքը բնական է, և հետզհետէ Մեսրոպայ ճիգերը Սահակայ խորհուրդներով զօրացեալ իրականութեան կսկսին մօտենալ: Ծածկեալ կամ կորուսեալ գրութեանց յուրեր երևան կուգան (Փրպ. 40), միւս կողմանէ թեթև զբաղմամբ մըն ալ կը համոզուին թէ այոյժ գիրքին է գիւտ իրացը» (Փրպ. 41): Եպիսկոպոսաց ժողովներ ալ կը գումարուին «հոգալ զգիւտ գարութեան Հայոց» (Խոր. 134), և հարկ կը լինի ևս «զգացուցանել թագաւորին զպէտս այսպիսի մեծ և կարևոր խնդրոյ» (Փրպ. 41): Վերջապէս մտադրութիւն կը գրաւէ Միջագետաց քաղաքներէն մէկուն եպիսկո-

պոս Գանիէլի մօտ գտնուած նշանագիրներու լուրը՝ զորմէ Հաբէլ վանականն ալ խօսած էր Վաւազապ-հոյ, Միջագետք գտնուած միջոցին: Թագաւորական հրամանով Վահրիճ Խաղուսի, հաւանաբար Խաղ եպիս-կոպոսի ազգականութենէն անձ մը, կը յղուի առ Հա-բէլ: Վահրիճ և Հաբէլ կերթան առ Գանիէլ, կը գտնեն փնտռուածը. Հաբէլ կը պատրաստէ, Վահրիճ ալ կը զննէ և կը սերտէ և կը բերէ: Վաւազապուհ և Սա-հակ Մեսրոպի կը յանձնեն. և Մեսրոպ կարևոր նախա-պատրաստութիւններէ յետոյ ուսուցանելու կսկսի այդ նշանագիրները: «Ձամս ստիաւս» (Խոր. 134), կամ «ամս երկուս» (Կոր. 9), այդ աշխատութիւնը կը շարունակուի, այլ արգիւնքը կատարեալ զօհացում չտար, և նոր կատա-րելագործութիւն գտնելու համար Մեսրոպի ինքն ճան-պայ կելնէ Սահակէ որոշուած ընկերներով:

Մեսրոպ կերթայ նախ առ նոյն ինքն Գանիէլ ե-պիսկոպոս (Խոր. 136), անտի կանցնի Եդեսիա առ Պրա-տոն հեթանոս հռետոր, և կը պատուուի ևս տեղւոյն Բաբելաս կամ Ռաբուլաս եպիսկոպոսէն. կանցնի Սմիդ և տեղւոյն Ակակիսս եպիսկոպոսէն ալ պատիւ կը գտնէ: Պրատոնի և Ռաբուլասի խորհրդով Փիւնիկէ կերթայ Ե-պիսկան հռետորին ետեւէն, և անտի ի Սամոս (Խոր. 136), կամ լաւ ևս ի Սամուսատ (Կոր. 9), այլ Եպի-փանու տեղ կը գտնէ նորա Հուսիանոս աշակերտը (Խոր. 136. Կոր. 10): Բոլոր այս հետազննութեանց մէջ ձեռնունայն մնացած աղօթքի կապուելին, և մտաց երկնային լուսաւորութեամբ կը լրացնէ աթուլթալից շարքը, և Հուսիանոսի ձեռնառութեամբ ձեւերու վա-յելչութիւնը կը կազմէ:

Պատմութիւնը կը շարունակէ տակաւին նախնա-կան աշխատութեանց պարագաները պատմել: Սահակ կը լուսաւորէ զՄաշթոց, գիւրահնար ճանապարհներ ցոյց կուտայ, զրոց կարգադրութիւնը և հեգեանայից ուղ-ղաձայնութիւնը կը սովորեցնէ: Սահակ ինքնին կընտրէ «արս բանիբունս և մտացիս ի քահանայիցն հայոց», իւր նախկին աշակերտաց մէջէն, և Մեսրոպի օգնական-կուտայ: Մեսրոպ ալ ստէպ հարցումներով Սահակէ կընդունի «գաթութալիցն գաղափար ըստ անսայթաբու-

թեան լուսին», զի ոչ Մեսրոպ և ոչ իւր ընկերք կա-րող չէին ուղղակի անստալ բան մը վճարել առանց Սա-հակայ առաջնորդութեան (Փրպ. 45 — 47):

Մեսրոպայ զառնալէն յետոյ Սահակին ըրածները խիստ քննադատութեամբ աւելորդ կը դառնային, եթէ Մեսրոպայ Սամուսատի մէջ ունեցած լաջողութիւն կատա-րեալ լինէր: Ուստի ոմանք ամբողջ Մեսրոպայ ուղեւորու-թեանց մասը կեղակարծ դատեցին, այլք Մեսրոպայ ուղե-ւորութեանց միջոցին գործածն ու գտածը յոյժ թերի նկա-տեցին, իսկ այլք ևս Հուսիանոսի արհեստը լոկ գժագ-րական, իսկ Սահակայ աւելցուցածը բերականական դատե-ցին: Խնդիրը եկեղեցական նպատակէ դուրս լինելով, մա-տենագրական պատմութեան զննութեանց կը պատկանի հաւանական գոյնը ցուցնել, ինչպէս շատեր ալ կը զբա-ղին հայկական այբուբէնին բուն հիմը և իսկական ծա-գուծը լուսաբանելու համար:

Գիրի գիւտին և գրականութեան ժամանակ կը կազ-մուի սսկեղէն դարու երանաշնորհ Թարգմանչաց խում-բը Սահակայ և Մեսրոպայ գլխաւուութեամբ: Բայց Սա-հակայ 60 և Մեսրոպայ 40 աշակերտաց բազմութիւնը գիրի գիւտէն առաջ ալ թարգմանչութեան պաշտօն կը վարէին, և իբր եկեղեցւոյ ուսեալ պաշտօնեայնք Ս. Գիրքի և Ս. Աւետարանի կտորները բերանացի թարգ-մանութեամբ կը ծանօթացնէին ժողովրդեան, և «ուր ոչ լինէին մերձ սուրբն Սահակ կամ մեծն Մեսրոպը» անձամբ կամ իրենց աշակերտաց միջնորդութեամբ, հա-ւատացեալք «ոչ կարէին իմանալ զվերձանութիւնս գրոց սրբոց և զրկեալ լինէին ի լուսաւոր պատուիրանացն աս-տուծոյ՝ ունայն ունկնդրութեամբ և զուր աշխատու-թեամբ» (Սահ. 8):

Երբ նորագիւտ գիրերու ուսուցումը կսկսէր, և Մեսրոպ իբր մեծ ուսուցչապետ գործոյն գլուխը կանց-նէր, վերոյիշեալ խումբէն ընտրելագոյններ Սահակայ ընտրութեամբ Մեսրոպայ շուրջը գրաւոր թարգման-չաց նոր խումբ մը կսկսէին կազմել, և ասոնք են մեր այժմ Թարգմանիչ անունով ճանչցածները: Նոցա ա-նունները պատմական պատահարաց շարքով հետզհետէ պիտի լիջեմք: Առաջին չորսեր որ այդ պաշտօնի կոչուե-

ցան՝ եղան. Յովհան Եկեղեցացի, Յովսէփ Պաղնացի, Տիրայր Խորձենացի և Մուշէ Տարոնեցի, չորսն ալ արք բանիբունք և մտացիք ի քահանայիցն Հայոց, որք էին սակաւ մի մերձաւորեալք ի յունական հեգենայան» (Փրպ. 46):

Այդ մեծ եղելութեան թուականը 404, 405 և 406 տարիներուն մէջ կը պարունակուի. տարբեր ժամանակագրութեանց համեմատ: Աւելի լայտնի է Կորիւնի վերջը կարգացուածը թէ Մեսրոպայ մահէն 35 տարի յառաջ էր (Կոր. 29), որով կը լինի 439 - 35 = 404: Բայց նոյն տեղ առաջին Յագկերտի 8-րդ տարին ալ յիշուած լինելով կը լինի 399 + 7 = 406, և լայտնի չէ թէ երկու ասացուածներէն որուն աւելի ոյժ տալու է. կամ թէ 404 է 406 տարբերութիւնը երկամեայ թերի փորձերուն (Կոր. 9) միջոցը չէ՞ արդեօք: Նոյն գիրքին մէջ Մեսրոպայ ուղևորութեանց սկիզբը կը դրուի Վաւազայի 5-րդ տարին և յաջողութեամբ դարձը Վաւազայի 6-րդ տարին (Կոր. 9. 10), բայց այդ թուականը ուղիղ չերևիր: Նախ որ Վաւազայի 5-րդ տարին յառաջ ալ յիշուած է իբր Վահրիճի երթալուն թուական (Կոր. 9), և «ամս երկուս» տշխատուելէն յետոյ տակաւին Վաւազայի 5-րդ տարին չկրնար լինել: Միևս կողմանէ նոյն Կորիւնի գրածով (Կոր. 29), Մեսրոպայ կրօնաւորութիւնը մահուանէ 45 տարի յառաջ լինելով, կրօնաւորութեան և գիրի գիւտին մէջ 10 տարի միջոց պիտի լինի: Արդ ստույգ է թէ Մեսրոպայ ծառայեց Վաւազայի իբր զբազիր (Խոր. 134), ստույգ է թէ Խորովու ժամանակ այդ պաշտօնը ստանձնեց (Փրպ. 37), և եթէ գիրի գիւտը Վաւազայի 5-րդ տարին լինէր, Մեսրոպայ 10 տարի յառաջ կրօնաւորած լինելով, ո՞չ Վաւազայի ծառայած կը լինէր և ոչ Խորովու, և Խորովէ առաջ արքունիքէ հեռացած պիտի լինէր:

Աւրիշ հաշուով մը, Վաւազայուհի դանիելեան նշանագիրներու լուրը առած է Միջագետք եղած ատեն, (Խոր. 134), իսկ Միջագետք գացած է երբ Արկաղիսի ժամանակ «շփոթեալ լինէր թագաւորութիւնն Յունաց և զօրքն ընդ միմեանս պատերազմէին», երբ և

«յաղաքս մեծին Յովհաննու», այսինքն Ոսկերեանին համար խառնութիւնք ելած էին (Խոր. 132): Արդ այս շփոթութիւնք սկսան 402-ին յունագգի և զօթացի զօրավարաց մէջ, և 403-ին Ոսկերեանը արքորելու փորձ եղաւ և խափանուեցաւ, իսկ 404-ին գործադրուեցաւ: Վաւազայի Միջագետք երթալը ամենայն հաւանութեամբ եղած կը լինի 403-ին վերջերը: Արդ եթէ գիրի գիւտին բուն թուական դանիելեան նշանագիրներուն յայտնուիլը պիտի ընդունեմք, եթէ իբր երկամեայ փորձը հաշիւի պիտի առնուեմք և անկէ ետքը պիտի դրնեմք Մեսրոպայ ուղևորութիւնը, և եթէ Սահակայ գլխաւորութեամբ կատարուած վերջնական աշխատութիւնն ալ իբրև գիրի գիւտին լրումը պիտի նկատեմք, յարմարագոյն է 404 թուականը ընդունել իբր Վահրիճի երթալուն և առաջին նշանագիրները բերելուն տարիներն և 406 թուականը առնուլ իբր գործոյն վերջնական աւարտման թուական:

#### 4 Ոսկերէն դարու արդինք

Գիրի գիւտէն մինչև 415 տակաւին կը շարունակէ երկրին խաղաղութիւնը և այս տառնամեայ հանդարտութեան միջոցին Վաւազայուհի և Սահակ և Մեսրոպայ համամիտ գործակցութեամբ մեր ազգային դպրութեանց ոսկեդարուն հիմերը կը դնեն: Առաջին գործն է երկրին ամեն կողմերը հայ գրութեան դպրոցներ բանալ, որպէս զի ազգն ազատի ասորական խաղաղութեան կոշտութենէն և յունական ծեքածոս ծեթեթէթէն (Սահ. 11): Հարկաւ վերոյիշեալ Սահակ-Մեսրոպեան հարիւրէն էին իւրաքանչիւր վիճակի կամ գաւառի մէջ դրուած ուսուցիչները, և ի հարկէ մեծագոյն հոգը գլխաւոր կեդրոններուն վրայ կը տարուէր, քանի որ ինքն Սահակ ալ յատուկ մտադրութիւն դարձուցած էր իւր սիրելի Մամիկոնեաններուն, և հայերէն գիր սորվող ազատորդի երիտասարդաց «առաջնոյն Վարդան անուն էր» (Կոր. 14), նոյն ինքն Սահակայ թողնիլը և ապագայ Աւարայրի առաքինեաց զօրագլուխը:

Գիր գտնելու մեծ շարժառիթը սուրբ գիրքն էր,

և սուրբ գրոց թարգմանութեան պէտք էր ձեռնարկել: Մեսրոպայ և իւր օգնականներ չէին համարձակիր. «ոչինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսման» (Փրպ. 48): Միաբան կը դիմեն թագաւորին, և ան ալ մէկտեղ առնելով և նախարարներէն ալ ներկայացուցիչներ ունենալով կը յայտնեն Սահակայ, թէ ինքն պէտք է այս գործը ստանձնէ, որով հաւասար Լուսաւորչին երախտաւոր պիտի ըլլայ ազգին: Հաճեցաւ Սահակ և «անվեհեր ջանալով զգայգ և զյերեկ թարգմանեաց զկտակարանս ամենայն», և օգնական թարգմանիչներու և գրագիրներու ձեռք սկսան Ս. գիրքի օրինակներ շատնալ և տարածուել և գործածուիլ, և ի տօնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց հաւաքուող հաւատացեալք հոգևոր խնդութեամբ լեցուիլ, և մինչև իսկ ի հրապարակս և ի փողոցս և առտնին ամենուն բերանը սկսան հնչել սաղմոսներ և կցորդներ (Փրպ. 47—53):

Ս. Գրոց թարգմանութիւնը տարբեր կերպով պատմուած է այլուր (Խոր. 138), իբր զի Մեսրոպայ Սամուսատի մէջ անմիջապէս թարգմանած է Առակաց գիրքը և Հռօփանոսի գրել տուած, և յետոյ հին կտակարանի 22 նախականոնները և նոր կտակարանն ալ այնտեղ Յովհան Եկեղեցացի և Յովսէփ Պաղնացի թարգմանիչներու օգնութեամբ թարգմանած, և հայ գիրերը և հայ սուրբ գիրքերը ի միասին ներկայացուցած Վռամշապհոյ և Սահակայ: Ուրիշ տեղ ալ (Կոր. 12) կըսուի թէ միայն Առակը Սամուսատի մէջ թարգմանեց Մեսրոպ և գիրերու հետ բերաւ Վաղարշապատ առանց ամբողջ կտակարաններու թարգմանութիւնը յիշելու: Սակայն ոչ միայն մեր առաջին պատմածը Փարպեցույն համեմատ աւելի ընդունելի է, այլ և Խորենացին ինքն ինքեան կը հակասէ երբ Մեսրոպայ ամբողջ Ս. Գիրքը թարգմանել տալէ ետքը տակաւին Սահակը Ս. Գրոց թարգմանութեամբ զբաղեալ կը ցուցնէ (Խոր. 140): Նոյնպէս անընդունելի է Խորենացու յիշած միւս պարագայն թէ հայերէն Ս. Գիրքը ասորերէնէ թարգմանուեցաւ, ուրացող Մեհրուժանի ժամանակէն ետքը Հայոց մէջ յունարէն գիրք մնացած չլինելուն համար

(Խոր. 140): Ոչ միայն Փարպեցի յունարէնէ թարգմանուիլը յայտնապէս կը ցուցնէ (Փրպ. 48), այլ և ցարդ ձեռուընիս եղած աստուածաշունչը կը հաստատէ, թէ մեր թարգմանութիւնը Եօթանասնից կոչուած յունական օրինակին վրայ եղած է, և ոչ թէ Բէշիթը կոչուած ասորական օրինակին վրայ, որ համանման է եբրայական բնագրին և ուղղակի անկէ բղխած: Փիլոքսենեան կոչուած ասորական թարգմանութիւնը որ Եօթանասնից օրինակին վրայ յօրինուած է, մեր հայերէն աստուածաշունչէն հարիւր տարի ետքը թարգմանուեցաւ Պօղիկարսոս քորեպիսկոպոսէն (Vigourout S. 203): Ստուգ է որ մեր աստուածաշունչին, և մանաւանդ նոր կտակարանին մէջ ինչ ինչ ասորական հետքեր կը տեսնուին աստ և անդ, սակայն ասոնք չեն բաւեր ասորերէնէ թարգմանութիւն լինելը հաստատել, յովժ մասնակի նշաններ լինելով, այլ միայն կը հաւաստեն թէ մեր թարգմանիչք ասորերէնի հմուտ և ասորական օրինակին ծանօթ լինելով կրցան երբեմն ինչ ինչ բառեր կամ բացատրութիւններ կամ դարձուածներ ասորերէնէ փոխ առնուլ կամ ասորերէնի ոճով կազմել:

Ս. Գրոց թարգմանութենէ ետքը եկեղեցական պաշտամունք կը պահանջէին ծիսական կարգադրութիւններ: Թերևս ասոնք են «եկեղեցական գրոց գումարուութիւնն, զորոց կը գրուի թէ Սահակ «ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ» էր. (Կոր. 21. Սով. 17): Սահակայ յատուկ պատարագամատոյց մը յիշուած է ուրեք (Յուշիկք Ա. 329), այլ այն օտարոտի և նոր գործ մը կերևի. այսու հանդերձ այժմեան պատարագամատոյցի կազմութիւնն ալ պէտք է Սահակի վերագրել: Ժամագիրքի ճակատը Սահակայ անունը կը կարդացուի մինչև ցայսօր, և Օձնեցին նմին կը վերագրէ կանոնի քարոզները և աղօթքները (Օձն. 31), բայց հարկաւ ուրիշ մասեր ալ ունի: Մարականներէն աւագ շաբաթու կարգը ամբողջ՝ Տաթևացին Ս. Սահակի կուտայ (Տաթ. 637), այլ ոճն ու կազմութիւն չեն նպաստեր այդ կարծեաց, կամ թէ շատ քիչ բան հնար է Սահակի վերագրել:

Ծիսական կարգերուն անցնելով, ոմանք ձեռնա-

դրութիւնը 410-ին պատրաստուած կրօն, աշխարհա-  
թաղը 513ին, քահանայաթաղը և հոգեհանգիստը բիւ-  
ետքը, սերմնորնէքը 423-ին (Յուշիկք Ս. 327—328),  
սակայն ճշտութեամբ փաստ մը չունիմք ձեռուընիս,  
միայն թէ առհասարակ խորհրդակատարութեանց կար-  
գերը, մկրտութեան և դրոշմի, նշանի և սլակի, և այլ  
նոյնպիսի կարևորագոյն կարգերը կամ Սահակայ ձեռօք  
կամ Սահակայ հեղինակութեամբ պատրաստուեցան:

Կանոնագրոց մէջ Սահակայ անուամբ քանի մը  
կարևոր օրէնքներ կան, որք ազգային կանոնաց իբր  
հնագոյն մասեր պէտք է ընդունուին: Այսպէս են. Յա-  
ղաքս եպիսկոպոսաց կանոնք 7, Յաղաքս քորեպիսկոպո-  
սաց կանոնք 13, Կարգ քահանայից կանոնք 23, Կարգ  
վանաց կանոնք 8, Վասն գանձուց եկեղեցւոյ կանոնք  
12, Յաղաքս պտղոց ժողովրդականաց կանոնք 8: Այդ  
կանոնաց վերլուծութիւնը զանց կրնեմք, միայն կրսեմք  
որ եթէ Սահակեան կանոնաց ճշտութեան գառնայինք,  
չատ և շատ անկարգութիւններ ինքնին կը վերնային:  
Նաև Կանոնք Ս. Գրիգորի Լուսաւորչի և Կանոնք Ս.  
Թագէի առաքելոյ մականգրեալները, հարկաւ Սահակայ  
ձեռօք ձևակերպուեցան, զի իւր անուամբ եղած կա-  
նոններն ալ Լուսաւորչայ աւանդութեամբ և հեղինա-  
կութեամբ կազմած է: «Եւ զբազումս և զհայրապետա-  
ցն սրբոց ճշմարտապատում իմաստութիւնս յօրինեալ  
ի հայ լեզու... և շատ ևս այլ մեկնութիւնս զբոց սրբ-  
րոց թարգմանէր ըստ հայերէն նշանագրաց (Սուփ. 17  
— 18): Այդ կտորն ալ յոյն սուրբ հարց գիրքերուն  
թարգմանութեան կանխարկէ, որպիսիք բաւական թու-  
ով հասած են մինչև ցմեզ: Սակայն հարկաւ ամենքն  
ալ միայնոյ Սահակայ չեմք կարող տալ, միայն թէ  
պէտք է ճանչնալ թէ աշակերտաց և գործակցաց ձե-  
ռօք գրական աշխատութիւններ կատարել տուած ատեն,  
գործոյն գլուխն և ուղղիչը ինքն էր, և մեծ փառքը  
միշտ իրեն կը պատկանի:

Գիրի գիւտէն ետքը միջոց մը, ինչպէս ըսինք,  
խաղաղական արգիւնաւորութենէ լետոյ կը վախճանէր  
Վառամշապուհ խաղաղութեամբ և ինդութեամբ, իւր  
իշխանութեան ժամանակը անմոռաց լիշատակ թողլով

լետոնոց: Վառամշապուհի իշխանութեան տևողութիւնը  
21 տարի կը դրուի սովորաբար (Սուր. 140), սակայն  
մեք 5 տարի ևս կուզեմք յաւելուլ այդ հաշուոյն Փար-  
պեցւոյն երկու խօսքերը իրարու մերձեցնելով: Նախ  
Սեւրոպայ կրօնաւորիլը լիշտով կը գրէ. «Մինչև յամս  
հինգերորդ Վառամշապուհոյ» (Փրպ. 18), և գիրի պատ-  
մութիւնը աւարտած ատեն կը յաւելու. «Եկաց յետ  
այսօրիկ թագաւորն Վառամշապուհ սմս քսան և մի»  
(Փրպ. 54). որով վերջին 21 տարիներ առաջին 5 տա-  
րիներէն զատ համրուած կերևին, և Վառամշապուհ մե-  
ռած կը լինի իւր 26 ըդ տարին: Այդպիսի մի յաւե-  
լուած մեծապէս կը նպաստէ ժամանակագրական լար-  
մարութեանց, մէկ կողմանէ եղելութիւնները կը շարա-  
կարգէ կշիւ համաձայնութեան վրայ, և միւս կողմանէ  
կազատէ պատմութիւնը մերթ ընդ մերթ ընդհատ անիշ-  
խանութիւններ ենթադրելէ, ինչպէս որ պարտաւորեալ  
են ընել ժամանակագրութեան աշխատողներ զիպուած-  
ները կշիւ պահելու համար: Վառամշապուհ իւր 26 ըդ  
տարին վախճանած լինելով 389 է մինչև 414 թագա-  
ւորած կլինի: Պատմութիւնն ալ գինքը կը ճանչնալ իբր  
«հասեալ ի յերկար ծերութիւն» (Փրպ. 54), և գոնէ 75  
տարեկան եղած ըսելու եմք:

### 5 Յունական քամին մէջ:

Վառամշապուհի յաջորդն եղաւ իւր նախորդն ու  
եղբայրն Սուրով. որ կը գտնուէր ի Պարսկաստան բան-  
տարիութենէ ազատած, կամ 390-ին Սահակայ ձեռօք  
կամ անկէ ետքը Վառամշապուհոյ միջնորդութեամբ, բայց  
միշտ արգելական ներքին գաւառաց մէջ: Հայեր իւրնդ-  
րեցին ծերունի Սուրովը, զի Վառամշապուհ միայն 10  
տարեկան տղայ մը թողած էր Արտաշէս անունով և  
Արշակունեաց մէջ ուրիշ յարմար անձ չկայր: Սահակայ  
գլխաւորութեամբ պատգամաւորութիւն մը գնաց առ  
Յաղկերտ: Սահակ իւր նախկին բարերարին բարիք մը  
ընելու և երկիրն օտարի ձեռք չթողուլ զգացումներէն  
վառեալ էր: Յաղկերտ զժուարութիւն չզգաց Հայերը  
զոհացնել և այլոք ծեր» Սուրովը վերստին թագաւորեց-

նել: Այլ սա 8 ամի միայն ապրեցաւ և կարծես թէ միայն փառօք գերեզման իջնելու համար վերստին գահ ելաւ (Փրպ. 55, Խոր 142):

Խոսրովու մահուամբ միայն 11 տարեկան Արտաշէսը մնաց մէջտեղ Արշակունի տոհմէն, և Յազկերտ առիթ գտաւ կանուխ յղացեալ խորհուրդ մը իրագործել, և իւր Շապուհ որդին Հայոց վրայ թագաւորեցնել և բնիկ հայ հարստութիւնը խափանել: Հարկաւ պարսիկ պաշտօնէից բազմութիւն մըն ալ լեցուց հայ արքունիքը, զի բոլորովին խակ երիտասարդ մը կերևի Շապուհ: Յազկերտի նպատակն էր արքունական շքով և մեղմօրինակ ընթացքով ընտելացնել Հայերը պարսիկ ոգւոյն և դէնին և հեռացնել յունական հոգիէն և քրիստոնէական եռանդէն:

Բոլորովին հակառակն էր Սահակայ սիրտն ու հոգին, և պէտք էր անհնարին տագնապ կրէր նորօրինակ կացութենէն, և հաւանական է որ թեթեւբարոյ նախարարաց ալ ծանր չթուեցաւ ի սկզբան Շապուհի թագաւորութիւնը, մինչ ամեն շողմարար փաղաքշանք ալ կը կատարէին ազատութեան համակրութիւնը գրաւելու: Այդ գծուարութիւնը մէկ կողմէն, միւս կողմէն ալ յունական բաժնին մէջ հայ դպրութիւն մուծանելու փափաքը յորդորեցին Սահակ հայրապետը Պարսից բաժինը թողուլ և Վարդան թուրք և Մեսրոպ գործակիցը և աշակերտաց խումբ մը Ղևոնդ Վանանդեցւոյն գլխաւորութեամբ ի միասին առնելով անցնել յունական բաժինը (Խոր. 148):

Վառաձայհոյ մահը 414, և Խոսրովու մահը 415 ղնելով, և Շապուհի թագաւորելն ալ անմիջական կարգադրութիւն մը նկատելով, անտի իբր տարի կամ տարի ուկէս ետքը 417 ին կը ղնեմք մեք Սահակայ ուղևորութիւնը: Ոմանք աւելի անագան Յազկերտի մահուանէ յետոյ 420-ին կուզեն ղնել Սահակայ երթը, բայց որովհետև Վառաձայ երկրորդ տարին արդէն Սահակ զարձած է և Արտաշէսը թագաւորեցնելու կաշխատի, և Սահակայ ուղևորութեանց, պատգամաւորութեանց, յաջողութեանց, աշխատութեանց և արդիւնաւորութեանց համար շատ նեղ է հազիւ տարւոյ մը միջոցը, անոր

համար հարկ է ուղևորութիւնը կանխել և գոնէ երեք տարի Սահակը յունական բաժնին մէջ մնացած ըսել:

2է գրուած թէ ում յանձնեց Սահակ աթոռոյ հոգածութիւնը երբ անտի հեռացաւ, զի Մեսրոպն ալ ի միասին տարած էր. այլ որովհետև նա հեռու տեղ չէր և իւր սեփական վիճակէն ալ դուրս ելած չէր. և շարունակեալ յարաբերութիւնք անխափան կը մնային, կրնամք ըսել թէ յատուկ տեղակալի ալ պէտք չունէր: Արդէն իւր փեսայն Համազասպը սպարապետութեան պաշտօնովը նախարարական խումբին պետը կը նկատուէր:

Հեթանոս պետութեան ընթացքէն ցաւած և քրիստոնեայ պետութեան վրայ յուսալից սահմանազուխը անցած ատեն, մեծ յուսախաբութեան հանդիպեցաւ Սահակ: Արդէն Արկադիոսի մահուանէ յետոյ 408-ին, Թէոդոս Փոքր եօթնամեայ մանկան խնամակալը Անթեմիոս փոփոխէր էր երկկողմանի հարկատուութեան ոճը և յունական բաժինը Վառաձայուհէ հանելով յանձնել էր կուսակալ կոմսի մը (Խոր. 138): Այս պատճառով կաթողիկոսի իշխանութիւնն ալ սկսեր էր անարդուիլ, և յունական բաժնին գաւառներ կը նկատէին իբր «վիճակեալ յաթոռն Կեսարու»: Յունականութիւնը թէ քաղաքական և թէ կրօնական գործոց մէջ զօրացնելու ջանք կը լինէր, հայ դպրութիւնն ալ չէր ներուած, և այս ամենը նոյն իսկ Սահակայ դէմ սկսան պնդել տեղական իշխանութիւնք: Անատոլիոս Պոնտական սահմանաց ընդհանուր բզեշխը պարզ քաղաքավարութիւն միայն ցոյց տուաւ Սահակայ, վարչական ընթացքը չբոխեց ամենեւին: Սահակ պարտաւորուեցաւ Բիւզանդիոն դիմում ընել, և Մեսրոպայ և Վարդանայ ձեռք առ կայսրն Թէոդոս և առ պատրիարքն Ատտիկոս ուղղեալ թուղթեր յանձնեց ու լղեց առ Անատոլիոս: Այլ պատգամաւորներ արգելուեցան երթալ ի Կոստանդնուպօլիս, մինչև որ Անատոլիոս մայրաքաղաքէն գրաւոր հրահանգ ընդունեցաւ և Գերջանու Գնիթ եպիսկոպոսն ալ ուղեկից տալով զիրենք ճանապարհու: Ղևոնդ և իւր ընկերակիցք հիւր մնացին Մելիտինոյ Ակակ եպիսկոպոսին մօտ, իսկ Սահակ գործելէ խափանեալ

Տիւր մնաց հաւանաբար Անատոլիոս բղեշխին կամ թէ Կեսարիոյ արքեպիսկոպոսին, որ այն ատեն Փիրմոս էր յաջորդ Հելլագրոսի յաջորդին Բարսղի:

Թէոդոս Փոքր հազիւ 16 տարեկան էր տակաւին, և կայսերութեան խնամակալն էր իւր քոյրն Պուղքերիա, ուխտեալ կոյս մը. տակաւին ծաղկահասակ և բոլորովին բարեպաշտական կենաց նուիրեալ: Եկեղեցական պատգամաւոր մը, եկեղեցւոյ վիշտերը, երկնային այցելութեան նշանը, հեթանոսաց ընթացքը. և Մեսրովպայ արժանիքը լաւ տպաւորութիւն գործեցին արքունեաց վրայ. պետական խորհրդականք ալ մտածեցին հարկաւ թէ Հայոց համակրութիւնը շահելով հնար է իրենց բաժինը ընդարձակել, ինչ որ դժուար էր զինուորական զօրութեամբ յաջողցնել:

Պատգամաւորք ձմեռը Բիւզանդիա անցուցին և զատիկը ընելէ ետքը (Կոր. 17), որ է 418 տարւոյ զատիկը, կայսերական և պատրիարքական հրամանագիրերով դարձան առ Անատոլիոս: Սահակայ իշխանութիւնը ճանչցուած էր յունական բաժնին վրայ իբր առանձին եկեղեցական նահանգ Կեսարիոյ վիճակէն տարբեր, ներուած էր որ իրենց բնիկ լեզուով և գրով կարող լինին իրենց եկեղեցիները վարել, հրամայուած էր որ կայսերական ծախքով հայերէն դպրութեան վարժարաններ բացուին, այնպէս որ «առին զոր յուսային և զոր ոչն յուսային» (Խոր. 152): Երկնային յատուկ շնորհ մըն ալ այդ յաջողութիւնը եղաւ: Փոխանակեալ նամակները կը տեսնուին Խորենացւոյն մէջ, թէպէտ վաւերականութեան վրայ ներեալ է երկբայութիւն ունենալ: Գիրի գիւտին համար Բիւզանդիա չդիմելնուն կամ Ոսկերեանի հետ չխորհրդակցելնուն կամ Ասորիներու դիմած ըլլալնուն համար գրուած մեղադրանքներ տեղի չունեցող խօսքեր են: Զարմանալի է միայն որ Հռովմայ վատիկանեան մեծ մատենադարանին մէջ, զանազան այբուբենից գտիչներուն կարգին նկարուած է Ոսկերեանն ալ ձեռքը հայերէն այբուբենով, բայց սրահն ալ նկարն ալ ժՁ դարու գործեր են, և նշանակութիւն չեն կրնար ունենալ:

Բիւզանդիոյ ըրած շնորհներուն մէջ կայ վարդա-

նի տրուած ստրատելատութեան աստիճանը, որ պէտք է ըլլայ յունական բաժնին նախարարական գունդերուն վերին հրամանատարութիւնը: Մեսրոպի ալ Եկեղեցիատիկոսի (Խոր. 156) կամ Ակումիտի (Կոր. 16) աստիճանը տրուեցաւ. որ կրնայ համաձայնիլ դեռ ևս Յունաց եկեղեցւոյն սովորական Արքիմանդրիտի աստիճանին, զոր կուտան բարձրաստիճան և ուսումնական վանականաց, նման մեր այժմեան վարդապետութեան աստիճանին, որոյ սկիզբն ալ Մեսրովպէ եղած գիտեմք, և վարդապետ անունով կոչուած է միշտ Մեսրոպ մեր մէջ, և միւս յունական կոչումներ երբէք կիրառութեան մտած չեն: Կայսերական կարգադրութեանց մէջ կայր նաև յատուկ ամուր քաղաք մը կառուցանելու հրամանը. և Անատոլիոսի ընտրութեամբ շինուեցաւ Կարնոյ քաղաքը Թէոդուպոլիս անունով (Խոր. 158), որ է այժմեան Էրզրումը:

Սահակայ գործունէութեան դառնալով, արդիւնքն ալ մեծ եղաւ յաջողութեան համեմատ: Անատոլիոս ստացած հրամաններուն համեմատ ամեն զիւրութիւն ընծայեց Սահակայ հովուական պաշտաման պէտքերը կարգադրելու և դրամական միջոցներ ալ հայթայթեց ուսումնական վիճակը բարձրացնելու, նորագիւտ հայ դպրութեան վարժարաններ բանալու և ուսումը զարգացնելու (Սոփ. 14):

## 6. Պարսից ըստնին մէջ:

Մինչ Սահակ յունական բաժնին մէջ յաջողութեամբ կուրախանայր, Պարսից բաժնին գործեր վատթարէն վատթարագոյնը կը յառաջանային: Եսպուհ պարսիկ թագաւորը իւր տկարութեամբ և անկարգութեամբ ամենէն անարգուած էր. Համագասպ սպարապետի մահուամբ նախարարք անգլուխ մնացած էին (Խոր. 142), իշխանութեան մէջ անիշխանութիւն էր կատարեալ: Եսպուհ անտանելի կացութենէն ազատելու համար հօրը հիւանդութիւնը պատճառելով 419-ին դարձած էր ի Պարկաստան իւր իշխանութեան չորրորդ տարին, տեղը պարսիկ զօրագլուխ մը թողլով: Նախարարաց մաս մը

Ներսէս ձիճրակացիի գլխաւորութեամբ զօրագլուխը սպաններ էր, և այլ ևս գլուխ և իշխանութիւն չունէր երկիրը: Շապուհի դառնալէն քիչ ետքը մեռած էր Յաղկերտ, Շապուհ ալ սպանուած էր (Խոր. 146), և եղբայրը Վռամ թագաւոր հռչակուած 420-ին, և հայերէն վրէժ լուծելու խորհուրդներ կործար (Խոր. 148):

Միակ անձը որ այսպիսի շփոթ պարագայից մէջ կարենար լուծման կերպ մը գտնել և յաջողցնել՝ Սահակն էր, բայց նա ալ բացակայ էր: Նախարարք միացան Սմբատ Բագրատունիի գլխաւորութեամբ և յատուկ պատգամաւորներ լղեցին առ Սահակ, «զի ի մէջ նոցա անցեալ ի միաբանութիւն հաւաքեսցէ դամենեսեան» (Խոր. 156): Անհնար էր Սահակայ զիմադրել յուսալից զրոյցներ ալ կային թէ Վռամ հեռու չէր գոհացում տալու ոճով վտանգը զարմանելու նպատակէն: Սահակ յունական բաժնին մէջ թողուց Մեսրոպը իբր կաթուղիկոսական տեղակալ կայսերական հրովարտակով ճանչցուած հայրապետական իշխանութիւնը շարունակելու: Այդ պաշտօնը կը ցուցնէ թէ Մեսրոպը եպիսկոպոսական աստիճան ստացած էր: Թէպէտ և վարդապետական կոչման գերազանցութեան շնորհիւ աւելի այդ տիրոջը կը կրէր, ինչպէս մինչև վերջին ատեններ մեր եպիսկոպոսները ու նոյն իսկ պատրիարքներն ալ սովորութիւն ունէին զործածել: Իսկ քաղաքական զործոց համար ալ օգնական թողուց Սահակ իւր կրտսեր թոռները, Հմայեակն ու Համազասպեանը, և ինքն Վարդանայ և պատգամաւորաց հետ դարձաւ Այրարատ երկիրը:

Վաղարշապատ հասնելուն պէս հրաւեր կարգաց բոլոր նախարարներուն, և նախ անոնց մէջ համաձայնութիւն գոյացնելէ ետքը հաւանութիւն առաւ Վռամ-շապուհի Արտաշէս որդին թագաւորեցնել, որ մօտ 18 տարեկան եղած էր: Վաթողիկոսին և նախարարաց կողմանէ Սմբատ Բագրատունի և Վարդան Մամիկոնեան զեսպան ընտրուեցան, և կարևոր թուղթերով Վռամայ ներկայացան, որ զկնի քննութեանց և պայմանաց հաճեցաւ Արտաշէսի թագաւորելուն, անոր անուան պահալու կոչուածն ալ սասանական Արտաշիր անուան փոխելով և հարկաց վերակացութիւնն ալ անոր յանձնե-

լով: Շապուհ պարսկին մեկնելէն յետոյ 3 տարի անիշխանութեան մատնուած էր երկիրը, և եթէ ոչ երկրին աւերիլը և ամայնալը, գոնէ պարսիկ գանձուն վնասը մտազրուութեան արժանի եղած էր, «զի պակասեալ լինէին հարկք արքունի» (Խոր. 148): Եռամեայ անիշխանութեան մէկ տարին Յաղկերտի վերջին տարին համարելով, երկուքը կը մնան Վռամայ առաջին տարիներուն և Արտաշիրի թագաւորելը պէտք է դրուի 422-ին: Որովհետև Սահակ էր որ բնիկ Արշակունի պետ մը ունենալու խորհուրդը յառաջեցուց, ինքն կերպով մը Արտաշիրի երաշխաւոր և խնամակալ նկատուեցաւ:

Մեսրոպ յունական բաժնին մէջ իւր պաշտօնը արգիւնաւոր կերպով շարունակեց, բոլոր գաւառաց մէջ զպրոցներ և տեսուչներ հաստատեց, այլ պատմութիւնք շատ քիչ մանրամասնութիւններ հասուցած են մեզ: Գնիթ Տերջանցի, գաւառին եպիսկոպոսը, Սահակայ նախկին աշակերտներէն և Բիւզանդիոն գացող պատգամաւորներուն ուղեկիցը, իւր վիճակին վերակացու հաստատուեցաւ, որ է ուսումնական գլուխ և վարժարանաց տեսուչ: Նոյն պաշտօնով Եկեղեցաց գաւառին մէջ զրուեցաւ Գանան Եկեղեցացի, գուցէ և սա նոյն վիճակին եպիսկոպոս (Խոր. 162): Անկէ անցաւ Մեսրոպ ի Շաղգոմք կամ Շատգոմք (Խոր. 162), Սպերի մօտ, որ է այժմեան Մասաթեթէ, և զոր ի զուր ոմանք Թորգումի հովիտը կարծեցին: Այս տեղ «բովանդակեաց զվարդապետութիւնս առելոց խմբիցն» (Խոր. 162), որով կը ցուցուի թէ Շաղգոմք վարդապետներ հասցնելու տեղ մը եղաւ, և իրաւամբ կրնամք ողջունել Շաղգոմոց Վարդապետանոցը՝ իբրև ազգային Գաւառականներուն անդրանիկը: Ղևոնդ Վանանդեցի և Ենովք Սպերցի Մեսրոպի հեռանալէն ետքը Շաղգոմոց վերակացութիւնը վարեցին:

Յատուկ աշխատանք մըն ալ ունեցաւ Մեսրոպ յունական բաժնին մէջ Բորբորիտոն կամ Բորբորիանոս կոչուած հերետիկոսներուն հետ, որոց նկատմամբ յատուկ յանձնարարութիւն ըրած էր Ատտիկոս պատրիարք կամ համոզել կամ հալածել (Խոր. 156): Սահակ այդ զործն ալ Մեսրոպի թողած էր (Խոր. 158), և սա ալ

քննութիւններ բացաւ, աղանդաւորք բանաի, կապանաց և այլ տանջանաց մատնուեցան, և ապա խանձեալ և մրեալ և պէսպէս խայտառականօք նեղեալ երկրէն Հալաճուեցան (Սոփ. 15): Որչափ և Հաւատոյ յանցաւորաց համար մարմնաւոր պատժոց դրութիւնը ընդհանրապէս մերժուած և իբր միջնադարեան հաւատաքննութիւն մեղադրուած լինի, սակայն ստույգ է թէ նախնի դարերուն մէջ կայսերական իշխանութիւնք այդ միջոցները գործածեցին, և նոյն օրինաց հետեւողութեամբ էր որ յունական բաժնին մէջ մերոնք ալ յոյն պատրիարքին յանձնարարութեանց գործադիր լինել ստիպուեցան:

Մեսրոպայ Հայոց գիրը կազմելէն ետքը, զօրծոյն մասնագիտութիւնը ստացած լինելով, ըստ ազգային պատմչաց, դրացի Արաց և Աղուանից համար ալ տառեր կազմեց: Արաց այբուբենի գիւտը հաւանաբար աւելի կանուխ է Առամշապհոյ կենդանութեան ժամանակ: Այդ մասին իրեն գործակից ունեցաւ Ջաշա վրացին և Մովսէս եպիսկոպոսը, և վայելեց Բակուր թագաւորի օգնութիւնը: Իսկ Արաստանի հայ գալրոցներու վերակացու նշանակուեցան այս երկրորդ այբուբեանն առթիւ Տիրայր Խորձենացի և Մուշէ Տարոնեցի որոց անունը լիշեցինք գիրի գիւտին առաջին աշխատութեանց մէջ: Իսկ Աղուանից այբուբենի կազմութեան համար քաջալերող եղան Արովաղ թագաւոր և Երեմիա եպիսկոպոսապետ, և վերջինս Ս. Գրոց թարգմանութիւնն ալ կատարեց (Կոր. 19). Իսկ գործակից եղաւ Բենիամին Աղուան զոր առ այս լռեց Մեսրոպին Սիւնեաց նոր և երիտասարդ նախարարն Վասակ: Աղուանից աշխարհին մէջ հայ գալրոցներ ալ բացուեցան և անոնց վերակացու դրուեցաւ Յովնաթան Սիւնի: Բայց օտար այբուբեններու խնդրոյն նկատմամբ ի դէպ է նոցա լեզուներն ալ ուսումնասիրել և սեփական աւանդութիւնն ալ զննել, մեր ազգային պատմութեան գրածին ճշտութիւնը որոշելու համար:

Մեսրոպայ իւր պտույտը շարունակելով Արաց և Աղուանից կողմերէն դարձաւ ի Գողթն իւր առաջին քարոզութեանց գաւառը: Նաբիթ իշխանի որդին՝ Գիտ մեծ ընդունելութիւն ըրաւ և իւր երկրին մէջ ալ գալրոց-

ներ բանալ տուաւ (Կոր. 14, Խոր. 162): Սիւնեաց նահանգին մէջ Վասակ իշխան գորաւոր կերպով օգնեց գալրոցներու բազմանալուն, որոց վերակացութիւնը ստանձնեց Անանիա Սիւնի, նահանգին եպիսկոպոսը (Կոր. 14): Բախասական գաւառն ալ աղանդաւորաց բոյն եղած էր, այնտեղ ալ հասաւ Մեսրոպայ, գալրոցներ ալ բացաւ և անոնց վերակացութիւնը յանձնեց Մուշեղ եպիսկոպոսին: Գարդմանոց երկրին մէջ ալ նոյնը ըրաւ Մեսրոպայ՝ Խուրս իշխանին ձեռնառութեամբ: Վերջապէս Տաշրաց Աշուշա իշխանէն ալ հրաւիրուեցաւ և բացած գալրոցները յանձնեց Սամուէլ եպիսկոպոսի: Ասոնք ամենքն ալ Սահակայ նախկին աշակերտներէն էին, որք իրենց եպիսկոպոսութեան վրայ փայլմը կը նկատէին գալրոցներու վերակացութեան պաշտօնը:

Վերջապէս Մեսրոպայ հովուական և ուսուցչական պտույտէն լետոյ կը գառնայ յԱյրարատ յողջոյն հայրապետին և ի շնորհաւորութիւն նորապսակ թագաւորին: Սահակ առժամեայ հանդարտութիւն մը կը վայելէր, և իւր սիրական գրական աշխատութեանց կը պարապէր և թարգմանութիւններով կը ձոխացնէր լեզուն ու եկեղեցին (Կոր. 20): Մեսրոպայ ուրախութեամբ պատմեց ունեցած յարողութիւնները, Սահակ իւր ճիգերը, և երկու ամուք մտածեցին ևս քան զիս ընդարձակել գրական գործունէութեան ասպարէզը, ճոխացնել նորանոր թարգմանութիւններով, և լեզուն զարգացնել ծաղկեալ լեզուներու հմտութեամբ և յարաբերութեամբ: Այդ նոր ճիգերը կսկսին Արտաշիրի թագաւորութեան ժամանակ, բայց բարեացապարտն Առամշապհոյ անպիտան զաւակը բնաւ մաս չունի այդ գեղեցիկ ջանից մէջ: Նոր որոշման արդիւնքն է ընտրելագոյն աշխատողներ լռել ուսմանց զանազան կեդրոնները: Յովսէփ Պաղնայի և Եղնիկ Կողբացի կը ղրկուին Եգեսիա, ուր քանի մը մանր աշխատութիւններէ ետքը կը խորհին մեկնել «առանց հրամանի», և հելլեն գալրութեանց սիրով Բիւզանդիոն կանցնին (Խոր. 164, Կոր. 21, Սոփ. 16): Նոյն միջոցին Յովհան Եկեղեցացի և Արձան Արծրունի կը լռուին ի Կեսարիա, բայց ասոնք ալ Բիւզանդիոնի ճանպարհ ձեռք կանուռն: Այն տեղ կը հասնին ևս Ղևոնդ

Վանանդեցի և Կորիւն Պատմաբան որք ուղղակի Բիւզանդիոնի համար որոշուած էին: Վեցեքին ի միասին բաւական տարիներ կաշխատեն այն տեղ լուսնական ուսմանց և թարգմանութեանց: Իրենց երիցագոյնը Ղևոնդն է, այլ Եղնիկ կերևի ամենուն խնամողն ու լանձանձիչը (Կոր. 21, Սոփ. 17): Իրուած է թէ Մաքսիմիանոս պատրիարք մեծ ընդունելութիւն ըրաւ այդ վեցերուն (Խոր. 164), սակայն Սահակ և Մեսրոպայ այդ աշակերտները լղեցին Արտաշիրի թագաւորելէն քիչ ետքը 424-ին, երբ տակաւին պատրիարք էր Ատտիկոս իրենց մեծ բարեկամը, որուն հայ ծագում ալ կուտան օտար հեղինակներ (Thierry.): Ատտիկոս մեռաւ 426 ին, և իրեն յաջորդեց Սիսինիոս, և 2 տարի ետքը 428-ին Նեստոր, և 3 տարի ևս ետքը Նեստորի նգովուելուն վրայ ընտրուեցաւ Մաքսիմիանոս 431-ին. այնպէս որ Մաքսիմիանոս միայն աշակերտաց դարձին առեն կրնայ անոնց զիւրութիւններ և պատուասիրութիւններ ընծայած լինել:

Արտաշիրի ժամանակին անդորրութիւնը շատ վաղանցուկ եղաւ, իբր մեծամեծ փոթորիկին կարապետող հանդարտութիւն: Սահակայ և Մեսրոպայ խաղաղական վաստակք վեր ի վայր եղան լանկարծ. Մեսրոպայ իւր սովորականին համեմատ խոյս տուաւ քաղաքական շոինդէն, և կրօնաւորական և գրական առանձնութիւնը ձեռք առաւ: Սահակ պաշտօնին բերմամբ և հոգւոյն եռանդեամբ մտաւ արեծուփ յորձանաց հոսանքին և արիութեամբ մրցեցաւ մինչև վերջը, վտանգներ անցուց, վիշտեր կրեց, միայն հոգին իւր երկնային խաղաղութիւնը չկորսնցուց: Արդէն ութսնամեայ էր Սահակ երբ փոթորիկը սկսաւ բարձրանալ և զօրանալ:

### 7. Սահակայ աքսորուիլը

Նահանջ տարւոյ ձախողութեան աւելորդապաշտ կասկածը հանրացած է ժողովրդոց մէջ: Հայկական տոմարը 4 տարին անգամ մը նահանջ օր չունի հռովմէական տոմարին նման, այլ Հայկայ շրջանին 1460 տարիներու 365 նահանջ օրերը կը գումարուին, և արտա-

քոյ շրջանի ամբողջ նահանջ տարի մը կը կազմուի: 427 օգոստոս 12-ին կսկսէր Հայկայ երկրորդ շրջանին նահանջ տարին որ պիտի աւարտէր 428 օգոստոս 10 ին, և նահանջներուն նահանջն եղաւ այն տարին, և ագգային պատմութեան սղբալեաց ողբալի թուականը:

Արտաշիր 18 տարեկան թագաւորեր էր 422-ին, անտի 5 տարի անցեր էր, պատանին ինքնզինքն առաջնորդող երիտասարդ մը եղեր էր, և այլ ևս Սահակայ խոհական խնամակալութեան և խրատտուութեան լուծէն ալ զինքն ազատ կզգար, պարկեշտ հետեւողութեան ձիրքն ալ կորուսած՝ անառակ անկարութեան կերպարանն առած էր կատարելապէս: Ամեն տեսակ անկարգութիւնք կը պատմուին Արտաշիրի վրայ, մինչև նախարարաց իսկ անտանելի լինել, որոց միւս կողմէ աշխարհային կենաց լաւ վարպետներ լինելն ալ յայտնի է: Նախարարք իրենց մէջ խորհելով և խորհրդակցելով ստուար մեծամասնութիւն կը կազմեն Արտաշիրի դէմ, որ զնա գահազուրկ ընեն գերիշխան պետութեան վրձնով: Հարկաւ քաղաքական ձգտմանց և անձնական շահուց գրգիռներն են Արտաշիրի անկարգութեանց դէմ ձայները զօրացնողը, այլ պէտք է մանր հետազօտութեամբ գտնել անոնք, զի պատմութիւնն ո՛չ յայտնի անուն կուտայ և ո՛չ յայտնի պարագայ կը լիշէ:

Նախարարք կուզեն որ Սահակ ալ իրենց հետ միաբանի, և այստեղ կսկսի արիասիրտ ծերունւոյն աննկուն զիմազրութիւնը, զոր գեղեցիկ կը նկարագրեն ամեն պատմագիրք և ներբողաբանք իբրև Սահակայ մեծ հոգւոյն գերազանց հանդէսը: Այս խնդիրներով կանցնի նահանջ տարւոյն առաջին կէտը, 427 -- 8 ձմեռը (Փրպ. 58 -- 70):

Նախարարք լառաջ կը բերեն Արտաշիրի գեղծումները, Սահակ կը խրատէ «փոքր մի տանել թերութեան առնն» (Խոր. 172, Փրպ. 63), մինչև որ հնար լինի լուղղութիւն բերել: Նախարարք զորձած անօրէնութիւնները կը զիղաբանեն, Սահակ չուրանար պատմուածները. «ոչ առ սուտս ունիմ գձեզ, (Խոր. 172. Փրպ. 60), բայց դարմանը անհնար չկարծեր: Նախարարք ուրիշ դարման չեն զիտեր բայց եթէ գահընկէց ընել (Փրպ.

60), Սահակ համբերութեան կը յորդորէ և աղօթից և սիրոյ զօրութիւնը կը քարոզէ (Փրպ. 63—65): Նախարարը կը պնդեն. «մեզ քան զայդ ոչ իմանալ ինչ է և ոչ առներ» (Փրպ. 60), Սահակ կը յիշեցնէ որ ուրիշ Արշակունի իշխան չունին Արտաշիրի տեղ գնելու համար: Նախարարը պատրաստ են «պարսիկ ածել ունող աշխարհիս» (Խոր. 172), Սահակ կը սոսկալ այդ պատասխանէն, և քրիստոնէական ոգւով և պօղոսեան սկզբունքով կը խրատէ անհաւատից առջև դատուելէ խորշել (Փրպ. 67): Նախարարը անշարժ են իրենց մտաց մէջ և դարձեալ այն առաջարկութիւնները կը կրկնեն. Սահակ կառաջարկէ «զելս իրացն գտանել կայսերքն Յունաց Թէոդոսիւ» (Խոր. 172): Սահակ կրցած էր գոհ լինել վերջին անգամ կայսրէն ընծայուած դիւրութիւններով, բայց նախարարը գիտէին թէ նախարարական ազատութիւնը Պարսիկներէ ընդունուած են, այլ կայսերական օրէնքներէ մերժուած: Կուզեն ամիսներով երկնցած խնդիրը վերջացնել, և բացարձակապէս կը պահանջեն որ Սահակ իրենց հետ միանայ, այլ Սահակ վերջնական պատասխանը կուտայ. «ինձ քաւ լիցի մատնիչ լիներ» (Փրպ. 66), և կը յաւելու թէ ընտրած դատաւորնին աւելի չար է քան ամբաստանուած անձը:

Նախարարը սպառնալիքներու կանցնին. «Եւ մեք կամեսցուք և քեզ զբահանայանալ մեզ» (Խոր. 174, Փրպ. 67). Սահակ կը լռէ և ակնարկով միայն կը յայտնէ թէ սպառնալիքներ ալ իւր միտքը չեն փոխեր: Ծանր է ապաքէն հակառակութեանց վիշտը, այլ ծանրագոյն է իւրաջնոց և սիրելեաց հարուածը: Սահակ կը տեսնէ թէ ինչ վտանգի կը դիմեն նախարարը և կարող չլինիր չար խորհուրդը խափանել: Այս տագնապներու մէջ կանցնէ նա բաւական օրեր, ստէպ առանձնացած, և հազիւ հայրապետանոցի եպիսկոպոսունք և երիցունք և սարկաւազունք վայրկենական սփոփանքներ կրնան ազդել նորա սրտին (Փրպ. 62):

Նահանջ տարւոյն գարունը բացուեցաւ և դուռդիր նախարարներ «միաբանեալ գնացին» (Փրպ. 70) առ Վաւամ, և Արտաշիրի և Սահակայ դէմ սկսաւ չարախօսել թէ են «զՅունովք ելեալ խորհրդով» (Խոր. 174):

Վաւամ արդարադատութեան ձև ուզեց բանեցնել և հրամայեց որ ամբաստանեալք ներկայանան: Արտաշիրի և Սահակայ հասնելէն ետքը երկուքը առանձին քննեց, որք իրենց հաւատարմութիւնը ջատագովեցին, այլ Վաւամ կուզէր առիթէն օգտուել, թէպէտ օգտակար կը դատէր Սահակայ պաշտօնին վրայ մնալը եթէ հաւանէր նախարարներուն հետ համաձայնիլ: Սուրէն Պահլաւը միջնորդ դրաւ, այլ Սահակ ոչ սպառնալիքներով փոխուեցաւ, և ոչ վարձու խոստումներէ հրապուրուեցաւ: Վերջապէս «ի բազմամբոխ ատենի» Արտաշիր դատուեցաւ և դահրնկէց եղաւ (Փրպ. 75), և Վեհմիհրջապուհ պարսիկ Հալոց մարգպուն անուանուեցաւ Արտաշիրի 6-րդ տարին, 428 ամառուան միջոցին (Խոր. 128, Փրպ. 76):

Նոյն պատճառով Սահակ ալ կաթողիկոսութենէ զրկուեցաւ և արգելուեցաւ ի Պարսկաստան, և նախարարը որ անդ կը գտնուէին կաթողիկոս ուզեցին միակ եկեղեցականը որ յանձն առած էր դաւադիր նախարարաց ընկերանալ, և «խօսէր բանս անհանձարս և առաւել աղտեղիս քան զամենայն նախարարս» (Փրպ. 70): Սուրմակ, Բզնունեաց գաւառի Արծկէ աւանէն, երէց մը կըսուի սովորաբար. բայց որ և է աննշան երէց մը չէր կրնար նախարարաց գլուխ գառնալ և հայրապետական աթոռ բարձրանալ, մինչ տակաւին դադարած չէր ժառանգական իրաւանց գաղափարը: Սուրմակ կըսուի «ի տոհմէ քահանայից գաւառին» (Փրպ. 70), ուրիշ տեղ վիճակի տէր եպիսկոպոս մը կը տեսնուի (Խոր. 186) տոհմային յաջորդութեան իրաւամբ (Խոր. 178): Տեսանք արդէն թէ Բզնունեաց եպիսկոպոսութիւնը Աղբիսնոսի վիճակն էր (Արծ. 67). և դիւրին կը լինի հետեւցնել թէ Սուրմակ նոյն ինքն Մանազկերտացեաց տոհմէն էր, և երբ Սահակայ պաշտօնանկութեամբ Պարթևական տոհմը կը դադարէր, դարձեալ Մանազկերտացեաց տունը կանցնէր ի յաջորդութիւն աթոռոյն:

Սահակայ պաշտօնանկութիւնը և Սուրմակայ ընտրութիւնը իրաւաբանական տեսակէտէ վերիվերոյ նկատուած ատեն, կրնայ օրինական գործողութեան մը կերպարանը ունենալ. արժանաւորութեանց խնդիրէն ան-

կախարար: Փոփոխութիւններ կրնան կատարուիլ ազգի կամօք և վեհապետի հաստատութեամբ, սակայն Սուրմակ երբէք իբր հայոց կաթողիկոս ճանչցուած չէ, և Սահակայ կաթողիկոսութիւնը անխափան շարունակուած է մինչև իւր մահը: Գլխաւոր պատճառն է եկեղեցականութեան կամքն ու քուէն, որ երբէք ոչ Սահակայ պաշտօնանկութիւնը և ոչ Սուրմակայ ընտրութիւնը ուզեց վաւերացնել, թէպէտև Սուրմակ՝ Վեհմիհրջապուհ մարգարանին հետ կրցաւ Վաղարշապատը գրաւել երբ Սահակ Պարսից բանտին մէջ փակուած կը մնայր: Հայ եկեղեցականութեան գլխաւորութիւնը անցած էր մեծամասնութեամբ Սահակ Մեսրոպեան հարիւրոց ձեռք և իրենցմէ էին շատ եպիսկոպոսներն ալ: Երբ Սահակ չկայր, Մեսրոպայ անոր բնական ներկայացուցիչն էր, և նովին իսկ Մեսրոպայ եպիսկոպոսական խմբին գլուխ (Խոր. 180) և բացակայ կաթողիկոսին տեղակալը կը նկատուէր: Սուրմակ թէպէտ աթոռն ու հասոյթները գրաւած, բայց տկար կը զգայր զինքն, և այդ տկար գրից յուսահատութիւնն էր որ զինքն բռնութեանց և անիրաւութեանց կը յորդորէր, բայց անով իւր նախարարական բարեկամներն ալ իրմէ կը հեռացնէր:

Սուրմակ տարին չկրցաւ լրացնել և նախարարը իրմէ ձանձրացած (Փրպ. 77), ուրիշ կաթողիկոս մը ուղեցին Վաւմէն (Խոր. 178), որ յարմար սեպեց օտարազգի մարգարանին քով օտարազգի կաթողիկոս մըն ալ դնել ներքին երկպառակութիւնները վերջացնելու համար: Նոր կաթողիկոսն եղաւ Բրքիշոյ Ասորի, որուն ընտրութեան ոչ եկեղեցական տարրը մասնակցեցաւ և ոչ ազգային մարմինը: Բրքիշոյ դուրսէ եկաւ իւր գաւառակիցներով, իւր և նոցա ընտանիքներով լեցուց հայրապետանոցը, և լոյժ և թոյլ կեանք մը մտցուց այնտեղ, ուր և ոչ ընտանեկան սուրբ կեանքը մուծած էին թէ Պարթեազարմ և թէ մանազկերտացի կաթողիկոսները (Փրպ. 80, Խոր. 178, Սահ. 32): Բրքիշոյ եկաւ 429-ին և 3 տարի միայն կրցաւ մնալ իւր գրից մէջ:

Որչափ և Մեսրոպայ կը ջանայր հաւատոյ և վարդապետութեան և կրօնից և սրբութեան պաշտպանու-

թիւնն ընել, համաձայնութեամբ եպիսկոպոսական դասուն, ալ անտանելի էր իրենց Բրքիշոյի կեանքը, և նախարարք ալ գայթակղած էին նորա ընթացից վրայ (Խոր. 178): Վերջապէս որոշեցին մերժել զԲրքիշոյ, և Վաւմի դիմելով յայտարարեցին. «ոչ են կարգք նորա և վարք ըստ կարգի մերոյ աշխարհի ուսման» (Փրպ. 81): Օտար վեհապետաց համար կրօնական պաշտօնէից փոփոխուիլը, գանձուելիք տրոց և նուիրաց կարեւորութեանէ աւելի նշանակութիւն չունի, և Բրքիշոյն փոխելն ալ Վաւմի համար զժուարութիւն չունէր:

### 8. Աքսորէ դառնալուն.

Ազգին մեծամասնութիւնը ամենայն փափաքանօք Սահակայ դարձը կուզէր, և Մանէճ Ապահունի և Սպանդարատ Արշարունի այդ նպատակով Պարսից արքունիք ղրկուած էին: Ուրիշներ ալ Սահակայ դարձը խնդրելով միայն, թագաւորին կամքին կը թողուին կաթողիկոսութեան կէտը. և ասոնց պատգամաւորներն էին Վաչէ Արծրունի և Հմայեակ Աշոցեան: Յունական բաժնին Արծրունի և Հմայեակ Աշոցեան: Յունական բաժնին կողմանէ պատգամաւոր եկեր էր Հաւուկ Կուկուբեճցի յոյն բղեշխին հաւանութեամբ, որպէս զի Սահակին հրաման տրուի իրենց կողմը անցնիլ: Մեսրոպայ և եպիսկոպոսներ յանուն եկեղեցական ուխտին յղած էին Տիրուկ Զարիշատցի քահանայն, յատկապէս Սահակայ կաթողիկոսութեան համար աշխատելու: Վաւմ վճռեց Բրքիշոյի պաշտօնանկութիւնը, շնորհեց Սահակայ ազատութիւնը, ալ չուզեց բոլորովին նմա յանձնել աշխարհին կրօնական գլխաւորութիւնը: Կաթողիկոսութիւնը բաժնեց և լոկ հոգեւորական և զուտ կրօնական իշխանութիւնը Սահակի թողուց, պահանջելով միանգամայն որ հանդիսապէս հաւատարմութեան երգում տայ: Սահակ գոհացուց Վաւմը սքանչելի ատենաբանութեամբ, մերժեց նորա նուէրները, միայն անժառանգեալ նախարարաց, զորօրինակ Մամիկոնեանց և Կամսարակոնաց, իրաւանց վերահաստատութիւնը խնդրեց, և նախարարաց գահնամակին վաւերացմամբ մարգարանին քմահաճոյքին չեն-

Թարկուելինն պահանջեց և ընդունեցաւ (Նոր. 182), և 432-ին դարձաւ նորէն Հայոց երկիրը:

Քանիցս դիտել տուած եմք թէ հայրապետութիւնը լոկ կրօնականէն զատ, արտաքին և ազգային և քաղաքական գործունէութիւն ալ ունէր, և այս մասերն եղան զորս Առամ զատեց, և կաթողիկոս անունով տեսակ մը կրօնական մարգպանի լանձնեց, դարձեալ օտարազգի մը ընտրելով լայդ պաշտօն, որ եղաւ Շմուէլ Ասորի: Սորա գործերը պիտի ըլլային. Ա. Ընկերել մարգպանին. Բ. Կալի վերայ բաշխեց հարկաց. Գ. Ի վերայ դատաստանաց. Դ. Ի վերայ ալ աշխարհական կարգաց (Նոր. 180): Շմուէլ կատարելապէս Բրիքիշոյ մըն էր իւր կեանքով և ընթացքով, բայց ազգն ալ ևս մտադրութիւն իսկ չէր դարձնել անոր, զի նա լոկ մարգպանին համար կաթողիկոս էր, իսկ ազգն իւր կաթողիկոսը ու հոգևոր պետը կը ճանչնար Սահակը: Աաղարշապատու հայրապետանոցը մնացած էր Շմուէլի, ուստի Սահակ նոր հայրապետանոց մը բացաւ Բագուանայ Ս. Յովհաննէս վանքին մէջ, Նպատ լերան ստորոտը, Տըրգատայ մկրտութեան տեղը, որ է այժմեան Ալաշկերտի Իւչքիլիսէ կոչուած վանքը: Բայց Եջմիածնի կաթողիկէ տաճարն ալ Շմուէլի թողուած չէր, որովհետև Սահակ Մեսրոպը «խարսխեաց լեկեղեցւոջն կաթողիկէ որ ի Աաղարշապատ քաղաքի» (Նոր. 186): Այս կերպով Մեսրոպ կաթողիկոսական տեղակալի պաշտօնը կը վարէր հոգևորական գործոց համար, և այս տեղակալի պաշտօնը զոր ստանձնեց Մեսրոպ նախ լուսնական բաժնին համար, անկէ ետքն ալ շարունակեց վարել Սուրմակայ և Բրքիշոյի օրով, պահեց մինչև իւր կեանքին վերջը:

Շմուէլի թողուած աշխարհական գործոց մէջ էր եկեղեցական կալուածոց և հասութից մատակարարութիւնը, որ շատ լարմար էր Ասորիին ազահութեան: Օգտուելով այն իրաւունքէն զոր հայրապետանոցը կը վայելէր դատարկ աթոռոց հասցիները գանձելու, Շմուէլ չէր ներեր վախճանեալ եպիսկոպոսներու տեղ նորեր ձեռնադրել և շատերն ալ չնչին պատճառներով կը զըրկէր և կը հալածէր և իրաւունքները ինքը կը գանձէր: Այսչափ եպիսկոպոսաց մէջէն միայն Սուրմակ Բղնունեաց

եպիսկոպոսը և նախկին հակաթոռը Շմուէլի պաշտպանութիւնը կը վայելէր և իւր վիճակը ընդարձակելու միջոց կը գտնէր (Նոր. 186):

Նոր կերպարան մը ստացաւ դարձեալ երկիրը Սահակայ դառնալէն յետոյ, իրաւ խաղաղութեան և երջանկութեան միջոց չէր, բայց գոնէ տանելի վիճակ մըն էր: Աեհմիհրշապուհ մարգպանն ալ չարոգի կեղեքիչ մը չէր, և կարծես թէ պարսիկ լուծը սիրելի ընել տալու հրահանգ ունէր: Շմուէլ միայն դրամական ազահութեան հետամուտ երկրին գործերուն վրայ ազդեցութիւն իսկ չուներ. և նոյն իսկ Աաղարշապատի մէջ ժողովրդեան միսթարիչը Մեսրոպ էր: Սահակ Բագրեւանդայ մէջ կենդրոնացած, ալ 84 տարեկան հասակին ներելուն չափ կը շրջէր ժողովուրդը միսթարելու, և իւր նախկին աշակերտաց բազմութիւ խուճըը հզօր ձեռնտու էր կրօնական և սուսմնական զարգացման նպաստելու:

Մեծ շփոթութիւն մը պատահած էր այս միջոցին քրիստոնէութեան մէջ: Նեստոր Գերմանիկցին 428-ին Կոստանդնուպոլսոյ պատրիարք ընտրուելով առիթ ունեցած էր մոլար վարդապետութիւն մը քարոզել մարդեղութեան վրայ, մի Գրիստոսը երկուքի բաժնելով: Եկեղեցին վրդովուեր էր և 431-ին Եփեսոսի սուրբ ժողովը նզովեր էր գնեստոր, և Մաքսիմիանոս անցեր էր Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան: Հայք հազիւ թէ լսեր էին այս եղելութեանց պատմութիւնը, սակայն այն վեց թարգմանիչք որք կը գտնուէին ի Բիւզանդիոն կրցեր էին ի մօտոյ տեղեկանալ ճշմարտութեան: Իրենց փափաքը և Մաքսիմիանոսի յորդորը փութացուցին իրենց դարձը, և 433 ին ատենները մեկնեցան Բիւզանդիոնէ: Ղևոնդ և Եզնիկ, Յովհան և Յովսէփ, Արձան և Կորիւն, ի միասին առած էին Եփեսոսի ժողովական վճիռները և կանոնները, նմանապէս Ս. Գրոց ընտրելագոյն օրինակ մը (Նոր. 166), զորս բերին և մատուցին Սահակայ և Մեսրոպայ, մինչ սոքա կը գտնուէին Տարոնոյ Աշտիշատը, թերևս նաւասարդի աշխարհատօնին առթիւ: Աշտիշատայ մէջ Սահակ իւր սեփական կալուածին մէջ կը լինէր և իւր սիրելի Մամիկոնեան:

ներուն մօտ: Սուրբ գրոց օրինակէն հնարաւոր օգուտը քաղելու համար Սահակ լրացած թարգմանութեան նոր բաղադրութիւն մը բրաւ եզնիկի օգնութեամբ (Կոր. 21, Սոփ. 18), որ և հալ թարգմանութեան վերջնական օրինակը եղաւ:

Իսկ Եփեսոսեան վճիռք ծառայեցին իբրև կանոն հաւատոյ, մանաւանդ որ Եփեսոսի մէջ նշովեալ Նեստորականք աւելի համարձակութիւն գտեր էին Ասորւոց մէջ, և Իբաս Եդեսիոյ և Թէոդորիտոս Կիւրոսի և Բարձուժա Մծբնոյ եպիսկոպոսներ յայտնապէս Նեստորականաց կողմը կը պաշտպանէին: Եւ որովհետև Նեստորի անունը զգուշի եղած էր՝ Թէոդորոսի Մոպսուեստացոյ գործերը կը սփռէին Ասորւոց և Հայոց լեզուներով (Կոր 25, Սոփ. 26), որոց նկատմամբ ժողովական վճիռ չէր արձակուած: Չը մոռնանք որ Շմուէլի Ասորւոյ պատճառաւ բոլոր Ասորիք մեծ համարձակութիւն ունէին Հայոց մէջ: Սահակ նկատողութեան առաւ Թէոդորոսի Մոպսուեստացոյ գիրքը (Սահ. 148), և յատուկ ժողով ալ գումարեց յԱշտիշատ 435 ին. (Կալ. Ա. 68. Peltin Ա. 220), և նշանաւոր ճառ մըն ալ խօսեցաւ այն տեղ (Չամչ. Ա. 527), և Թէոդորոսի վարդապետութեան վտանգն ու սխալը ցուցուց. և հայրապետութեան մէջ և շուրջը զգուշութեան համար թուղթեր գրեց (Սահ. 139), և ժողովական թղթով նոյնը ծանուց Պրոկի պատրիարքին որ 434 ին յաջորդած էր Մաքսիմիանոսին, և Թէոդորոսի գիրքէն օրինակ մըն ալ լղելով և ուղիղ վարդապետութիւնն ալ յայտնելով կարևորը ընել յանձնարարեց (Սահ. 137): Ժողովական թուղթը տանողներն եղան Ղևոնդիոս և Սբերիոս ըստ օտարաց (Կալ. Ա. 70), առաջինը ծանօթ անուն է, բայց երկրորդը աղաւաղեալ կերևի:

Լիբերատոս Կարթագինեցի կը գրէ թէ հայք ճշմարտութիւնը սորվելու համար Պրոկի դիմեցին (Կալ. Ա. 70), սակայն աւելորդ բացատրութիւն է: Նախնի հայրապետք չէին քաջաւեր իրարու հետ փոփոխ յարգանաց և փոխադարձ պատուասիրութեանց մէջ առատանալ, և ինզրուածոյ ձևով բացատրել ինչ որ թելադրութեան նպատակաւ կը գրէին: Հետևապէս աւելորդ

կը դատեմք նաև ոմանց երկիւղածութիւնը, որ այս ոճէն գայթակղելով Հայոց թղթոյն վաւերականութիւնը մերժեցին (Ա. Միք. 39. 40): Պրոկի յարմար պատասխանը տուած է Հայոց ըստ օտարաց, և մեր մէջ ալ կը յիշատակուի թուղթ Պրոկի յառ հայս, զոր գրեց ձայնակցութեամբ Կիւրղի Աղեքսանդրացոյ և Ակակայ Մելիտինեցոյ (Խոր. 166), ևս և Յովհաննու Անտիօքացոյ (Կալ. Ա. 70): Պրոկի պատասխանը բերողներ եղան դարձեալ Ղևոնդիոս և Սբերիոս:

Հայոց նամակի օրինակ մը հրատարակուած է Սահակայ և Մաշտոցայ անունով (Սահ. 137) իբր պատասխանի առ Պրոկի: Սահակայ և Մեսրոպայ թուղթը կը յիշատակէ ևս Խաչիկ կաթողիկոս Արշարունի (Ասող. 193): Հայոց նամակ մը յառաջ բերուեցաւ Կոստանդնուպոլսոյ 553-ի ժողովոյն մէջ, զոր Յոյնք և Լատինք իբրև հինգերորդ տիեզերական կը պատուեն, և մայիս 17-ի նիստին մէջ հանդիսապէս կարգացուեցաւ, և նկատուեցաւ իբրև փաստ ուղղափառութեան ընդդէմ Թէոդորոսի Մոպսուեստացոյ: Ասոնց զննութիւնը մեր նպատակէն դուրս է, այլ Սահակայ համար փառք է մոլորութիւն մը կանուխէ մատնացոյց ըրած լինելը և իւր կարծեաց հետեւելով Կոստանդնուպոլսոյ ժողովոյն նոյն մոլոր գրութիւնը դատապարտելը:

Երբ այդ թղթակցութիւնք արտաքնոց հետ յարաբերութիւնները նորոգեցին, Սահակ և Մեսրոպ պատմեցին նոր խումբ մը ալ լղել իրենց աշակերտներէն թէ կրօնական և թէ լեզուական ուսմանց մէջ զարգանալու: Եփեսոսի ժողովոյն աւթիւ Աղեքսանդրիոյ գրպոցին համբաւը ալ աւելի բարձրացած էր, և մեծին Կիւրղի շնորհիւ եղած էր Աղեքսանդրիա իսկապէս «հիմն և արմատ ուղղափառաց, տարամերժող հերձուածողաց» (Ողբ Եդես. 115), և Սահակ ու Մեսրոպ որոշեցին Աղեքսանդրիա զրկել այդ երկրորդ խումբը: Այս անգամ նախադասուեցան աւելի երիտասարդներ՝ որք իրենց կրթութիւնը գիրի գիւտէն ետքը սկսեցին էին և ազգային դպրութեամբ սնած կրնային ըսուիլ: Խորենացոյ մէջ «զմեզ առաքեցին» խօսքերով պանծացողներն եղան ընտրեալները, սակայն անուններ յիշուած չեն այնտեղ: Սահակայ և Մաշտոցայ անունով (Սահ. 137) իբր պատասխանի առ Պրոկի: Սահակայ և Մեսրոպայ թուղթը կը յիշատակէ ևս Խաչիկ կաթողիկոս Արշարունի (Ասող. 193): Հայոց նամակ մը յառաջ բերուեցաւ Կոստանդնուպոլսոյ 553-ի ժողովոյն մէջ, զոր Յոյնք և Լատինք իբրև հինգերորդ տիեզերական կը պատուեն, և մայիս 17-ի նիստին մէջ հանդիսապէս կարգացուեցաւ, և նկատուեցաւ իբրև փաստ ուղղափառութեան ընդդէմ Թէոդորոսի Մոպսուեստացոյ: Ասոնց զննութիւնը մեր նպատակէն դուրս է, այլ Սահակայ համար փառք է մոլորութիւն մը կանուխէ մատնացոյց ըրած լինելը և իւր կարծեաց հետեւելով Կոստանդնուպոլսոյ ժողովոյն նոյն մոլոր գրութիւնը դատապարտելը:

Հակայ ներբողաբանը Հարեւանցի և խառն կը լիշէ քանի մը անուններ, որոց մէջ կը գտնեմք Մովսէս Խորենացին, Մամբրէ Խորենացին, Կաւիթ Ներքինացին, Եղիշէ Պատմաբանը և Ադան Արծրունին, և այլք բազումք, յաւելուածով:

Ասոնց հետ լիշուած են նաև Եզնիկ Կողբացի, Յովսէփ Պաղնացի, Արձան Արծրունի և Մուշէ Տարոնեցի. սակայն առաջին երեքը նոր դարձած էին Բիւզանդիոնէ և չարրորդը ձերագոյններէն մին էր, և հաւանական չէ որ Աղեքսանդրիա գացող նորերուն ընկերացած լինին: Իսկ Աղեքսանդրիա գացողներ երբ ժամանակ մը այնտեղ ուսանելէ յետոյ Ելլադա պիտի անցնէին, իրենցմէ ոմանք ալեկոծութեամբ Իտալիա ինկան և Հռովմայեցեցին, վերջէն Աթենք հաւաքուելով, անտի ալ Բիւզանդիա անցան (Խոր. 172), և երբ հայրենիք հասան Սահակ ու Մեսրոպ պալես կենդանի չէին (Սահ. 18):

Այդ գործոց վրայ շատ չանցաւ և 437 ին մեռաւ Շմուէլ իւր պաշտօնավարութեան 5-րդ տարին (Խոր. 186): Ասոր վրայ նախարարներ համամիտ և համաձայն խորհրդով դիմեցին Սահակայ որպէս զի հայրապետական իշխանութիւնը ամբողջութեամբ ստանձնէ և ազգին պաշտօնական գլուխը լինի: Սահակ արդէն 89 տարեկան ծերունի էր և նախարարք զօրաւոր անձի մը պէս կը վստահէին իրեն, և կը խոստանային իսկ իւր թոռները ազգովին կաթողիկոսութեան ժառանգ ընդունել և արքունի հրովարտակով հաստատել տալ: Բայց Սահակ իրեն համար տարիքին տկարութիւնը դիմադրեց և իւր յաջորդութեան համար կանուխէն տեսած տեսիլքը պատմեց, զոր մեք իւր տեղը բացատրեցինք, և իմացուց թէ աստուածային կամօք զազարած է Լուսաւորչեան սերունդից կաթողիկոսութիւնը: Սահակայ այդ դիմադրութիւնը պատճառ եղաւ որ հայրապետութիւնը ժամանակ մըն ալ պահեց այն բաժանեալ ձևը, որ մտեր էր Սուրմակի օրով և պաշտօնական դարձեր էր Շմուէլի ժամանակ: Հարկաւ եպիսկոպոսներ և նախարարներ իննսնամեայ ծերունին թախանձած ատեննին այդ բաժանումն ջնջելու նպատակը ունէին, բայց նպատակին չհասան: Հոգեւորական գործոց իշխանութիւնը

Սահակի վրայ մնաց. այլ արտաքին գործոց յաջորդութիւնը բաց էր, եպիսկոպոսներ ու նախարարներն ալ Սահակէ զատ մէկը դնելու հետամուտ չէին: Սուրմակ Մանազկերտացին առիթ գտաւ և արքունեաց հետ ունեցած լաւ յարաբերութիւններէն օգտուելով, նորէն կաթողիկոսական պաշտօնը ձեռք ձգեց և Շմուէլի յաջորդեց 437-ին (Յովհ. 76, Ստող. 77) և 6 տարի ևս պաշտօնավարեց, մինչև իւր մահը ինչպէս իւր կարգին պիտի ցոյց տամք:

### 9. Մահն ու թաղումը:

Սահակայ բազմավիշտ և բազմարդիւն կենաց վերջը հասեր էր և Շմուէլէ քիչ ետքը վտխճանեցաւ նա երջանիկ մահուամբ 439-ին: Վերջին ժամանակներ բուրովին տկարացած էր իննսնամեայ ծերունին «հիւանդութեամբ մահու» (Խոր. 188), որ կենսական զօրութեանց սպառելուն հետեանքն է. այլ ևս չէր կրնար շրջիլ, բայց ամեն կողմերէն կուգային Բագրևանդայ շրջիլ, բայց ամեն կողմերէն կուգային Բագրևանդայ վանքը նորա աստուածաբուրդի խօսքերուն կարօտը զգացողներ: Վառմ մեռաւ այն օրեր, 439 յունիսին, և Յագկերտ յաջորդածին պէս պատերազմի պատրաստութիւններ սկսաւ: Բագրևանդայ վանքը վանագի մէջ էր, զի այդ հովիտն էր պարսիկ բանակներուն սովորական ճանպան: Աւելի հանգարտ տեղ մը քաշուելու և աւելի հովասուն բնակութիւն ունենալու համար, գուցէ և վերջին օրերը սիրեցեալ Աշտիշատի մէջ լինելու փափագով, Սահակայ հետ եղողներ ուղեցին զինքը Բագրևանդայ վանքէն հանել: Այլ Սահակայ տկարութիւնը օրէօր կը ծանրանար և Արածանուոյ հովիտէն Բագրևանդայ դաշտը ելածուն պէս, պարտաւորուեցան Բլուր գիւղը հանգչել, հիւսիսակողման լեռներուն ստորոտը, այժմ Եահնիթէփէ կոչուած գիւղը, և այն տեղ աւանդեց երանելին իւր հոգին, իւր ծննդեան տարեդարձին ըստ հայկական ամառի:

Սահակայ մահուան թուականին համար կարծիքներ կը տարբերին, և պատճառը՝ Սասանեանց յաջորդութեան վրայ եղած կարծեաց տարբերութիւնն է, և մէկ

մըն ալ պատմիչներուն երկդիմի բացատրութիւնը: «Մինչև ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի» (Խոր. 189), և «Ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի» (Փրպ. 114), խօսքերը՝ երկրորդ Յազկերտ ալ կրնան իմացուիլ երկրորդ տարի ալ: Սակայն «Յառաջնում ամի Յազկերտի» (Կոր. 25), և «Յառաջնում ամի երկրորդ Յազկերտի» (Սոփ. 27), խօսքերը՝ առաջինները կը պարզեն և երկրորդ Յազկերտին առաջին տարին իմանալ կը թելադրեն: Նոյն իսկ Մեսրոպայ վեց ամիս ետքը «Յառաջնում ամի երկրորդ Յազկերտի» (Կոր. 29) մեռած ըսուիլը կը ցուցնէ թէ Սահակ Յազկերտի երկրորդ տարին մեռած չկրնար ըսուիլ:

Իսկ Յազկերտ երկրորդի թագաւորութեան տարին թէպէտ շատերէն պարզապէս 439-ին կը դրուի, այլ Նէօլտէքէ ճիշտ հաշուով կը դնէ պարսկական այն տարւոյն մէջ որ 438 օգոստոսէն 439 կը հասնի, և այն ալ նոյն տարւոյն տասներորդ ամսուան մէջ որ 439 յունիսի կը պատասխանէ. և մէք ալ լուսագոյն կը սեպեմք այդ կարծիքը ընդունել: Ամեն պատմադիրը կըսեն թէ Սահակ մեռաւ նաւասարդի 30-ին, որ իւր ծննդեան տարեդարձն էր, և այս օրն ալ շարժական տոմարի հաշուով կիչնայ 439 սեպտեմբեր 7-ին հինգշաբթի օր, ինչպէս ներբողբանն ալ կը լիշէ (Սահ. 35), թէպէտ ոչ Կորիւն, ոչ Փարպեցի և ոչ Խորենացի շաբթուան օրը չեն լիշեր և լետագայ դարերու հեղինակի մը խօսքըն ալ փաստ չկրնար կազմել, բայց բերանացի պահուած աւանդութիւն մը ենթադրելն ալ անհնարին չէ: Միւս կողմէ ստույգ է որ 439 սեպտեմբերը ալ ևս Յազկերտի առաջին տարին չէ ըստ տոմարին Պարսից, քանի որ նոյն տոմարով իւր առաջին տարին իբր երկու ամիսէ բաղկացած պիտի մնայր, ըստ որում դիտուած է որ թագաւորք տարեգլուխէ տարեգլուխ տարի հաշուելով, առաջին տարւոյն կոտորակը իւր ամբողջ տարի նկատելու սովորութիւն ըրած էին: Մեք 439 սեպտեմբեր 7 թուականը կընդունիմք իբր Սահակայ մահուան ճիշտ օրը, քանի որ միւս կողմէն Յազկերտի թագաւորելէն իրական առաջին տարին էր:

Սահակայ մարմինը թաղուեցաւ Սշտիշատ Տարո-

նոյ, որ ոչ միայն սեփական կալուած էր Լուսաւորչեան տոհմին, այլ և Մամիկոնեանց գաւառին մէջ կը գըտնուէր, և որ ի մանկութենէ անտի սիրելի եղած էր Սահակայ: Հայրապետին աշակերտներէն միայն Երեմիա սարկաւազապետ, և ազգականներէն միայն Տողրիկ իշխանակինն Վարդանայ լանուանէ կը լիշուին այս պարագային: Այս երկուքը հոգացին լուզարկաւորութեան կարգադրութիւնը, և եկեղեցականաց և ազատորերայ և ժողովրդականաց եռանդուն բազմութիւն մը քանի մը աւուրց շարունակ ճանապարհորդութեամբ փոխադրեց Սահակայ մարմինը Բագրևանդայ Բլուր գիւղէն մինչև Տարոնոյ Աշտիշատ օւանը, Տալար և Սպահունիք և Հարք (Անթէպ և Մալազկերտ և Պուլանըզ) գաւառներէն անցնելով: Սահակայ առաջին շիրմին նկարագիրը չունիմք, այլ մինչև ցայժմ պահուած գերեզմանը կից է Աշտիշատայ լուսաւորչաշէն մայր եկեղեցւոյն: Այժմեան Տէրիք գիւղին մօտ կը տեսնուին տակաւին մայր եկեղեցւոյն և իւր վանատան հիմերուն զիծերը, և անոնց մօտ ցած ու նեղ, անշուք և անարգ և հազիւ մարդաչափ բարձր նկուղ մը կայ կամարաշէն, և անոր մէջ կոշտ ու սևցած և կիսովի պատին խառնուած քարի մը տակ կը հանդէսն ազգին և եկեղեցւոյն լեզուին և գրականութեան ամենամեծ երախտաւորին, Ս. Սահակ Մեծ հայրապետին ոսկերքը: Ուրիշ կողմնակի քար մըն ալ կայ, և այդ ալ Սահակայ գտեր Սահականոյ կամ Անոյ իշխանուհւոյն, կամ ըստ ոմանց Վարդանայ կնոջ Իսարիկ իշխանուհւոյն գերեզմանն է, թէպէտ ժողովուրդը սխալմամբ Սահակի թոռ Վարդայ գտեր Ս. Շուշանիկի գերեզմանը կը կարծէ, մինչ Սրբուհւոյ մահն ալ գերեզմանն ալ Տիգրիսի մէջ եղած է, և մինչև հիմայ ալ պատուով կը պահուի քաղաքին միջնաբերդի մէջ:

Ս. Սահակ որ իրաւամբ Մեծ կը կոչուի, վերջին շառաւիղ եղաւ լուսաւորչեան տոհմին, և վեցերորդ և վերջին հայրապետ նոյն ցեղէն. ապրեցաւ 90 տարի 348-էն 439, և կաթողիկոսութիւն վարեց իբր 52 տարի 387-էն 439, առանց աքսորանաց տարիները զեղջելու. միակ աղջիկ մը ունեցաւ, որ թերևս իրմէ առաջ

ալ վախճանեցաւ, ինչպէս վախճանած էր փեսայն Համազասպ սպարապետը: Երեք թուներ թողուց, այլ ասոնցմէ միայն Հմայեակի ճիւղը շարունակութիւն ունեցաւ և պահեց իգական ճիւղի մէջ Լուսաւորչեան տոհմին շարունակութիւնը: Սահակ իւր մահուանէ առաջ իւր թուներուն թողած էր իւր տոհմային կալուածները: Տեսանք որ նախարարք պատրաստ էին Վարդանի կամ Հմայեակի վրայ դարձնել նոյն իսկ կաթողիկոսութեան ժառանգութիւնը: Ներքողարաններուն կը թողու՞մք Սահակայ անզուգական արդիւնքները բարձրացնել: Հայ գրականութիւնը ինքնին կոթող մըն է յաւերժական, և այն միայն բաւական է ըսելու թէ Սահակ «մահկանացու ծնեալ անմահ գիւրն լիշատակ եթող» (Խոր. 188): Նոյն իսկ իւր մահուան ատրիէն սկսաւ ազգը նորա լիշատակը տօնել արժանապէս (Կոր. 26):

#### 10. Ս. Մեսրոպ և թարգմանիչը

Երբ Սահակ վախճանեցաւ Սուրմակ արգէն ձեռք անցուցած էր կաթողիկոսութեան պետական մասը, այլ Սահակի սեփական եղող հոգևոր մասը անոր շանցաւ, և Մեսրոպ որ արգէն Վաղարշապատու մէջ այդ մասը կը վարէր Սահակայ անունով, մահուանէ ետքն ալ նոյնպէս շարունակեց, և այս պատճառաւ շատեր Մեսրոպը կաթողիկոսական տեղակալ կը ճանչնան, և սմանք նոյն իսկ կաթողիկոսաց ցուցակին մէջ անցուցին նորա անունը. այլ լոկ տեղակալները կաթողիկոսական շարքին մէջ զնել օրէն չէ: Մեսրոպայ պաշտօնավարութիւնը հաւաստեալ է, «Ջվերակացութիւն սրբոյ եկեղեցւոյ տառէր», և «Բազում թուղթս խրատագիրս և զգացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր» խօսքերով (Կոր. 26): Այլ յոյժ համառօտ եղաւ այդ միջոցը: Մեսրոպ ինքն ալ յոյժ ձերացած էր, Սահակէ միայն քանի մը տարեկան կրտսեր ըլլալով. ամուսկցին կորուստն ալ կարելի էր խոցեց նորա սիրտը, և մէկէն երկինք փոխադրուելէն ետքը, միւսը չհանգուրժեց երկիր մնալ, և միայն հինգ ու կէս ամիս յետոյ, և հալկական տոմարով միւսնոյն

ոտրուոյն մէջ, Մեհեկանի 13-ին (Կոր. 26, Փրպ. 117, Խոր. 190), որ է 440 փետրուար 17, շաբաթ օր, վախճանեցաւ մեծ վարդապետը Վաղարշապատու պաշտօնատեղւոյն մէջ, մեր հաշուով 86 տարեկան: Ականատեսք կը պատմեն (Կոր. 27) թէ լուսատեսիլ նշաններ երեցան մարմնոյն վրայ, և արժանի էր իսկապէս այդ փառաց, նա որ ամբողջ ազգի մը միտքը լուսաւորեց գրութեան տառերը հնարելով:

Թաղման տեղը նշանակութիւն ունի մեծ մարդոց համար, և Մեսրոպայ գերեզմանին տեղը խնդրոյ նիւթ եղաւ: Ոմանք կուգէին իւր ճննդավայրը տանել ի Հացեկաց Տարոնոյ, ուրիշներ իւր առաջին հիմնարկութեան տեղը ի Մարեփանք Գողթան, ուրիշներ կուգէին թողուլ իւր պաշտօնատեղւոյն մէջ ի Վաղարշապատ: Յովսէփ Հողոցմեցի և Թաթիկ Բասենցի, իւր աշակերտներ որք մօտ կը գտնուէին չկարացին խնդիրը իւրովի պարզել: Վահան Ամատունի նոր հազարապետ ընտրուած էր Պարսիկներէն, այսինքն է մարգարանի մօտ ներքին և քրիստոնեայ օգնական մը: Նա իւր ազդեցութիւնը գործածեց և Հմայեակ Մամիկոնեանի հաւանութիւնն ալ ընդունելով, Մեսրոպայ մարմինը փոխադրեց իւր մօտակայ գիւղը, որ է Օշական աւան Արաղածոտն գաւառի:

Երեք տարի (Կոր. 27), կամ լաւ ևս երեք ամիս (Սոփ. 34) յետոյ, Ամատունի յատուկ տաճար կանգնել տուաւ Ս. Մեսրոպայ գերեզմանին վրայ. գեղեցիկ յօրինուածով ականատեսներու նկարադրութեան համեմատ. և խորանին ներքև «գորբոյն հանգիստն» յօրինեց (Կոր. 27): Այդ տաճարը դարերէ լետոյ կանգուն էր տակաւին, բայց կիսուեր և անշքացեալ, և մեզի մօտ ժամանակներու մէջ Գէորգ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը փոյթ տարաւ նորակերտ և փառաւոր եկեղեցի մը շինել. և յաջողեցաւ իսկ զայն լրացնել ամենայն շքեղութեամբ: Խորանին ներքև ստորերկրեայ մատուռ մը կայ, որոյ մէջ տեղն է Ս. Մեսրոպայ գերեզմանը, նոր ժամանակի ընդարձակ արձանագրութեամբ մը, իսկ գերեզմանին ուղղութեամբ ճիշտ վերևը, այլ բեմին վրայ կը մնայ սուրբ սեղանը, և սեղանին վրայ կը բար-

ձրանայ եկեղեցւոյ կաթուղիկէն: Երանի թէ նոյնչափ մըն ալ Ս. Սահակի գերեզմանին վրայ գտնուէր:

Ս. Մեսրոպայ գրական արդիւնքներէն, ի բաց առեալ նոյն ինքն տառերը, գրեթէ ոչինչ որոշակի մեր ձեռքը չգտնուիր: Ժամագրքին ճակատը իւր անունն ալ կայ, բայց չեմք գիտեր թէ որ կտորն է իւրը: Ծիսարանը Մաշտոց անուն կը կրէ, բայց ոչ միայն ծիսական կարգադրութիւնք հայրապետական իշխանութեան կը պատկանին, այլ և շատ հաւանական է, որ Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսին անունէն ծագած է այդ անուանակոչութիւնը: Եարակնոցէն ապաշխարութեան հարցերը Մեսրոպայ կը վերագրուին Տաթևացիէն, և մատենագրական զննութիւնք ալ շատ դժուարութիւն չեն յարուցաներ, բայց իբր աներկբայ չեն հաստատուիր: Վերջապէս գրուած է թէ սկսած էր «Ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել» (Կոր. 21), սակայն ասոնցմէ ալ բնաւ մեր ձեռքը հասած չկայ: Ոսկեդարու անանուն թարգմանութիւններէն մաս մը հարկաւ Մեսրոպի կը պատկանի, բայց որոշել և հաւաստել անհնար է:

Երբ Սահակ և Մեսրոպայ վախճանեցան իրենց յաջորդ թողուցին ընտիր աշակերտաց բազմաթիւ խումբ մը, որք մեծաւ մասամբ եպիսկոպոսութեան հասած էին կամ կարևոր տեղեաց վերակացու եղած: Սահակայ աշակերտք 60 եղան (Խոր. 122), և Մեսրոպայ 40 (Սահ. 9.), բայց հարիւրին անուններն ալ չունիմք, պատմութիւններն ալ մութ են: Խօսից կարգին քանիներ լիշեցինք և քանիներուն ալ գործերը յետագայ տարիներու մէջ կը լիշուին, ուստի իւրաքանչիւրին վերայ յատուկ պատմական քաղուածոյներ տալ աւելորդ կրկնութիւն կը դատեմք: Մինչև հիմայ լիշատակուածները, պատմական պարագայից կարգով հետևեալներն են:

- |                    |                     |
|--------------------|---------------------|
| 1 Յովհան Եկեղեցացի | 14 Եզնիկ Կողբացի    |
| 2 Յովսէփ Պաղնացի   | 15 Արձան Արծրունի   |
| 3 Տիրայր Խորձենացի | 16 Կորիւն Պատմաբան  |
| 4 Մուշէ Տարօնեցի   | 17 Տիրուկ Զարիշատցի |

- |                     |                        |
|---------------------|------------------------|
| 5 Ղևոնդ Վանանդեցի   | 18 Մովսէս Խորենացի     |
| 6 Գնիթ Գերջանցի     | 19 Մամբրէ Խորենացի     |
| 7 Դանան Եկեղեցացի   | 20 Դաւիթ Ներքինացի     |
| 8 Ենովք Սպերցի      | 21 Եղիշէ Պատմաբան      |
| 9 Բենիամին Աղուան   | 22 Աղան Արծրունի       |
| 10 Յովնաթան Սիւնի   | 23 Երեմիա սարկաւազապետ |
| 11 Անանիա Սիւնի     | 24 Յովսէփ Հոգոցմեցի    |
| 12 Մուշեղ Բալասական | 25 Թաթիկ Բասենցի       |
| 13 Սամուէլ Տաշրարի  | 26 Վահրիճ Խաղունի ևս   |
- այդ կարգէն պէտք է համրուի, զի իբր գրագէտ անձ ընտրուեցաւ առաջին գրական պաշտօնին:

Սահակ-Մեսրոպեան խմբին, կամ ինչպէս կը կոչեմք, Ոսկեդարու Թարգմանչաց խմբին երկասիրութեանց հետազոտութեան ալ չեմք մտներ, զի բազմադիմի նիւթերով և բազմակնճիւղ խնդիրներով մատենագրական զննութեանց պարագայներուն յատուկ ասպարէզ կը կազմեն:

